

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-16-Ը ԵՐԵՎԱՆՈՒՄ  
ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ  
ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-23/3**

ք. Երևան

01 մարտ 2024թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Կ. Սարգսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Պողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 2024 թվականի մայիսի 14-16-ը Երևանում անցկացվելիք Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2024 թվականի տարեկան հանդիպման կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1, N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը,

գ) ժամանակին չի սկսում ծառայության մատուցումը կամ ծառայությունը մատուցում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Սույն պայմանագրով իր կողմից մատուցման ենթակա ծառայությունների շրջանակներում պատրաստվող անհիմնադր և տպագրական որոշ նյութերում Պատվիրատուի համաձայնությամբ օգտագործելու Կատարողի տարբերանշանը (լոգո), սոցիալական մեդիա հարթակներում իր պաշտոնական էջերի միջոցով տարածելու սույն Պայմանագրով մատուցվող Ծառայությունների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվությունը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Ապահովել հնարավոր բոլոր միջոցառումների իրականացումը՝ կանխելու Պայմանագրի 5.8 կետով նախատեսված իրավիճակի ստեղծումը, իսկ դրա ի հայտ գալու պարագայում անմիջապես ձեռնարկել համապատասխան գործողություններ առաջացած խնդիրները վերացնելու և Ծառայության մատուցման բնականոն ընթացքը վերականգնելու ուղղությամբ:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), տվյալ փուլի շրջանակում մատուցված ծառայության տեխնիկական բնութագրում, միջոցառման կոնցեպտ/բովանդակությունում և իրականացման ծրագրում սույն պայմանագրով սահմանված կարգով կատարված փոփոխությունների ամփոփումը ներառող համաձայնագրի նախագիծը և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 2):

Ընդ որում, սույն պայմանագրի 4.3 կետում նշված յուրաքանչյուր փուլի շրջանակում մատուցվող ծառայությունների տեխնիկական բնութագրում, միջոցառման կոնցեպտ/բովանդակությունում և իրականացման ծրագրում կատարվելիք փոփոխությունները, ինչպես նաև հավելված 1-ով ներկայացված առանձին ծառայությունների մասով մատուցման անհրաժեշտությունն (պահանջը) արձանագրվում են հետևյալ եղանակով.

Փոփոխության նախաձեռնությամբ հանդես եկող կողմը սույն կետով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեներին է ուղարկում առաջարկվող փոփոխության բովանդակությունը: Փոփոխության քննարկման արդյունքների վերաբերյալ տեղեկությունը տրամադրվում է էլեկտրոնային փոստի միջոցով ոչ ուշ, քան վերոնշյալ փոփոխության առաջարկությունն ուղարկվելուն հաջորդող օրվա ժամը 18:00-ն: Սահմանված ժամկետում արձագանքի բացակայության դեպքում առաջարկությունը համարվում է մերժված:

Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ [ebdam2024@minfin.am](mailto:ebdam2024@minfin.am), Կատարողի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ [info@background.am](mailto:info@background.am): Վերոնշյալ գրագրությունն իրականացվում է միայն սույն կետում նախատեսված էլեկտրոնային փոստերի միջոցով:

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, պայմանագրի կամ դրա մի մասի արդյունքները չեն ընդունվում, ապա հանձնման ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Այս դեպքում Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է տրամադրում ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 1,799,478,000 (մեկ միլիարդ յոթ հարյուր ինսուսնիսը միլիոն չորս հարյուր յոթանասունուրե հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Սույն պայմանագրի Հավելված N1-ով ներկայացված ծառայությունների միավոր գինը կայուն է, և Կատարողն իրավունք չունի՝ պահանջելու ավելացնել, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնել այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ պայմանագրի հիման վրա կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 27-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվելու են փուլային եղանակով՝ հաշվետվությունների, հանձնման-ընդունման արձանագրությունների և ակտերի հիման վրա, հետևյալ փուլերով.

Փուլեր	Մատուցված ծառայություն	Վճարվող տոկոսներ
I փուլ	Կնքված պայմանագրեր, նախագծված բրենդավորում, առաջնղման մեկնարկված արշավներ, մշակութային բաղադրիչի իրականացման մշակված ձևաչափ, այդ թվում՝ ժամանակացույց:	Պայմանագրի արժեքի 25 տոկոս
II փուլ	Միջոցառումների անցկացման սրահների (այդ թվում՝ մոդուլային) կահավորում՝ անհրաժեշտ հարմարեցումներով և գույքատեխնիկական հագեցվածությամբ, հատկացված տրանսպորտային միջոցներ, միջոցառումների անցկացման ձևավորված վայրեր և արտաքին տարածքներ	Պայմանագրի արժեքի 50 տոկոս
III փուլ	Ծառայությունների մատուցման պարտավորությունների (այդ թվում՝ միջոցառման անցկացման վայրերում ապամոնտաժման աշխատանքների իրականացման և հասցված վնասների փոխհատուցման) ողջ ծավալով կատարում	Պայմանագրի արժեքի 25 տոկոս

4.4 Մանակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի բացվածքով առանձին բաղադրիչների մասով վճարումները կատարվելու են փաստացի կատարված քանակների համար:

#### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

Ընդ որում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում ներկայացված միջոցառման կոնցեպտ/բովանդակություն փաստաթղթով նախատեսված բովանդակային պայմաններից յուրաքանչյուր շեղման դեպքի պարագայում կատարողի նկատմամբ կիրառվելու է տուգանք պայմանագրի պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5%-ի չափով: Շեղման պարագայում կատարողը պետք է ապահովի համարժեք փոխարինում: Ընդ որում, յուրաքանչյուր համարժեք փոխարինումը նախապես պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8 Կատարողը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում իր կողմից մատուցման ենթակա ծառայությունների շրջանակներում երրորդ անձանց ազգային, հայրենասիրական, կրոնական, քաղաքական կամ այլ հայացքներից բխող այնպիսի գործողությունների (այդ թվում՝ չարտոնված հավաքների, ցույցերի, պրովոկացիաների, խուլիգանական կամ այլ ոչ իրավաչափ վարքագծի) համար, որոնք թե՛ Կատարողի, թե՛ Պատվիրատուի համար եղել են անկանխատեսելի, անվերահսկելի և անկառավարելի ու որևէ ձևով վնասել են Պատվիրատուի, 2024 թվականի մայիսի 14-16-ը Երևանում անցկացվելիք Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի 2024 թվականի տարեկան հանդիպման, դրա մասնակիցների բարի համբավին և/կամ Հայաստանի Հանրապետության վարկանիշին:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն

միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը; իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2 և N 2.1 հավելվածները, կից շնորհանդեսը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն

կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

ՀՀ ֆինանսների նախարարություն  
ք. Երևան, Մ. Աղամյան 1  
ՀՎՀՀ՝ 02629081  
Հ/Հ՝ 900011042182

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
ՖՆ գլխավոր քարտուղար՝




..... Կ. Սարգսյան  
/ստորագրություն/  
Կ.Տ


**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Բեգրաունդ Փրոդյաքշն» ՍՊԸ  
ք. Երևան, Անտառային փող., 160/148  
ՀՎՀՀ՝ 02676654  
ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ  
Հ/Հ 16600559951800

Տնօրեն՝



..... Կ. Պողոսյան  
/ստորագրություն/  
Կ.Տ



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ  
 Ծառայության

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	79991110/501	Տեխնիկական բնութագիրը ներկայացվում է հավելված N 1.1-ով	դրամ	1,799,478,000	1	ՀՀ, ք.Երևան	2024 թվականի մայիսի 14-ից 16-ը

ՀՀ	Ծառայության անվանումը	Չափման միավոր	Առավելագույն քանակ	Միավորի գին	Գումար	Մատուցման անհրաժեշտություն
1	2	3	4	5	6=4*5	Ը
	<b>Տարեկան հանդիպման կազմակերպում, այդ թվում՝</b>					
1.	<b>Գույքատեխնիկական հագեցվածության ապահովում, այդ թվում՝</b>					
1.1.	Կահավորում	Ծառայություն	1	156,000,000	156,000,000	
1.2	Ձայնային համակարգերի ապահովում	Ծառայություն	1	48,000,000	48,000,000	
1.3	Վիդեո համակարգերի ապահովում	Ծառայություն	1	90,600,000	90,600,000	
1.4	Տեսանկարահանում և հեռարձակում	Ծառայություն	1	90,600,000	90,600,000	
1.5	Համաժամանակյա թարգմանության ապահովում	Ծառայություն	1	90,000,000	90,000,000	
1.6	Լուսավորության ապահովում	Ծառայություն	1	168,000,000	168,000,000	
1.7	Գրասենյակային պարագաների և ՏՀՏ տեխնիկայի ապահովում	Ծառայություն	1	27,600,000	27,600,000	
1.8	Հուշարար համակարգի ապահովում	Ծառայություն	1	24,000,000	24,000,000	
2.	<b>Տարեկան հանդիպման սոցիալ-մշակութային բաղադրիչի կազմակերպում, այդ թվում՝</b>					
2.1	Կառավարիչների խորհրդի նիստի բացման արարողության մշակութային բաղադրիչ	Ծառայություն	1	48,000,000	48,000,000	
2.2	Բոլոր մասնակիցների ընդունելության մշակութային բաղադրիչ	Ծառայություն	1	36,000,000	36,000,000	

2.3	Գալա ընթրիքի մշակութային բաղադրիչ	Ծառայություն	1	12,000,000	12,000,000	
2.4	Տարեկան հանդիպման փակման արարողության մշակութային բաղադրիչ	Ծառայություն	1	9,600,000	9,600,000	
2.5	Ամուսինների/կանանց ծրագիր	Անձ	100	156,000	15,600,000	Կմատուցվի պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա
3.	<b>Մասնակիցների կեցության և լոգիստիկ կազմակերպչական հարցեր, անվտանգություն և առաջին բուժօգնություն, այդ թվում՝</b>					
3.1	Մասնակիցների դիմավորում և ճանապարհում, օդանավակայանի համապատասխան վայրերի կահավորում, տեղեկատվական կետերի տեղակայում, VIP ընթացակարգի վճար	Ծառայություն	1	27,600,000	27,600,000	
3.2	Տրանսպորտային ծառայություններ, այդ թվում՝					
3.2.1.	Պաշտոնական պատվիրակությունների ղեկավարների և ՎՋԵԲ բարձրաստիճան ղեկավարության համար մեքենաների հատկացում	Անձ	80	510,000	40,800,000	
3.2.2.	Հերթապահ ավտոբուսների երթևեկության կազմակերպում	Ծառայություն	1	34,800,000	34,800,000	
3.2.3.	ՎՋԵԲ կազմակերպչական թիմի համար տրանսպորտի ապահովում	Ծառայություն	1	10,800,000	10,800,000	
3.3.	Անվտանգության կազմակերպում (պահնորդական ծառայություն)	Ծառայություն	1	32,400,000	32,400,000	
3.4	Առաջին բուժօգնության կազմակերպում	Ծառայություն	1	2,400,000	2,400,000	
3.5.	Հյուրանոցների համապատասխան վայրերի կահավորում, տեղեկատվական կետերի տեղակայում	Ծառայություն	1	2,400,000	2,400,000	
4.	<b>Բրենդավորում, առաջնորդում և տարածքների ձևավորում, տպագրական աշխատանքներ, այդ թվում՝</b>					
4.1	Միջոցառման անցկացման վայրերի ձևավորում	Ծառայություն	1	194,400,000	194,400,000	Կմատուցվի ամբողջական կամ մասնակի՝ բաղադրիչի ներքո իրականացման ենթակա առանձին ուղղությունների շուրջ կողմերի միջև կնքվելիք



						համաձայնագրի հիման վրա
4.2	Հարակից տարածքների ձևավորում	Ծառայություն	1	68,400,000	68,400,000	
4.3	Տարեկան հանդիպման առաջնդման արշավներ, տեղեկատվական թերթիկների պատրաստում	Ծառայություն	1	109,680,000	109,680,000	
5.	<b>Նվերների պատրաստում, այդ թվում՝</b>					
5.1	Նվեր-փաթեթներ տարեկան հանդիպման բոլոր մասնակիցների համար	Հատ	2,000	21,600	43,200,000	Կմատուցվի ամբողջական կամ մասնակի՝ պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա
5.2	Նվերներ պաշտոնական պատվիրակությունների ղեկավարների և ՎՋԵԲ բարձրաստիճան ղեկավարության համար	Հատ	200	180,000	36,000,000	
6.	<b>Հյուրասիրություն, այդ թվում՝</b>					
6.1	Ետնախաճաշ	Անձ	1,250	115,200	144,000,000	
6.2	Ընդմիջումների իրականացման անընդհատ հասանելիություն	Ծառայություն	1	44,298,000	44,298,000	
6.3.	Բոլոր մասնակիցների ընդունելություն	Անձ	2,000	16,800	33,600,000	
6.4.	Փակման արարողություն	Ծառայություն	1	30,780,000	30,780,000	
6.5.	Լանչ-բոքսեր	Անձ	200	39,600	7,920,000	
7.	Համացանցի հասանելիության ապահովում Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքում և հարակից տարածքում	Ծառայություն	1	16,800,000	16,800,000	
8.	Պահեստային գեներատոր	Հատ	2	24,000,000	48,000,000	
9.	Անձնակազմի, այդ թվում՝ կամավորների վարձատրություն և/կամ խրախուսում	Ծառայություն	1	55,200,000	55,200,000	

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

«Քինանսների նախարարություն  
ք. Երևան, Մ. Ադամյան 1  
ՀՎՀՀ՝ 02629081  
Հ/Հ՝ 900011042182

«ՖՆ գործառնական վարչություն  
ՖՆ գլխավոր քարտուղար՝

Վ. Սարգսյան  
/ստորագրություն/ Վ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Բեգրաունդ Փրոդյաքշն» ՍՊԸ  
ք. Երևան, Անտառային փող., 160/148  
ՀՎՀՀ՝ 02676654

ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ  
ՀՎՀՀ 026600559951800



Տրոսին՝  
Վ. Պողոսյան  
/ստորագրություն/ Վ.Տ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-ԻՑ 16-Ը ԵՐԵՎԱՆՈՒՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆՂԻՊՄԱՆ ՈՒ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՅՄԱՆ

### 1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ԱՆՑԿԱՅՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՎԱՅՐԵՐԸ

2024 թվականի մայիսի 14-ից 16-ը Երևանում նախատեսվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ «Բանկ») 2024 թվականի տարեկան հանդիպման և գործարար համաժողովի կազմակերպում՝ Բանկի կողմից մշակվող օրակարգին համապատասխան: Տարեկան հանդիպման և գործարար համաժողովի շրջանակներում և դրանց կից կազմակերպվող յուրաքանչյուր առանձին միջոցառում հիշատակվում է որպես «Միջոցառում», իսկ համատեղ՝ «Տարեկան հանդիպում»:

Տարեկան հանդիպման օրակարգը կարող է ընդգրկել՝ չսահմանափակվելով.

1. Բանկի Կառավարիչների խորհրդի լիազույժար նիստ և դրա բացման արարողություն,
2. գործարար համաժողով (Հյուրընկալող երկրի և ընտրված այլ երկրների ներդրումային հեռանկարների նիստեր, պանելային քննարկումներ, գործարար համայնքի շփումներ և այլն),
3. ասոցացված միջոցառումներ (Առևտրի դյուրինացման ծրագիր, Համայնքի նախաձեռնություն և այլն),
4. քաղաքացիական հասարակության ծրագիր,
5. մեդիա միջոցառումներ (Բանկի նախագահի մամուլի ասուլիս, տարածաշրջանային տնտեսական հեռանկարների շնորհանդես, պատվիրակությունների մամուլի ճեպագրույցներ և այլն),
6. դոնորների հանդիպում և դրա հարակից միջոցառումներ,
7. շնորհանդեսներ, պարգևատրման և ստորագրման արարողություններ,
8. միջոցառման մասնակիցների համար սոցիալական միջոցառումներ (գալա ընթրիք, բոլոր մասնակիցների ընդունելություն),
9. ամուսինների/կանանց ծրագիր (ենթակա է հաստատման):

Տարեկան հանդիպման օրակարգում կարող է ներառվել նաև ցանկացած այլ միջոցառում, որը կհամաձայնեցվի հյուրընկալ երկրի, ի դեմս՝ ՀՀ ֆինանսների նախարարության, և Բանկի միջև: Նախատեսվող միջոցառումների վերջնական ցանկը (օրակարգը) Բանկի կողմից կներկայացվի ավելի ուշ փուլում: Միջոցառումներն անց են կացվելու Տարեկան հանդիպման համար նախապես հարկացված վայրերում՝ ապահովվող կահավորմամբ և տեխնիկական

հագեցվածությամբ, հեղինակար միջոցառումների վերջնական ցանկը չի կարող հանգեցնել հավելյալ տարածքների և տեխնիկայի անհրաժեշտության:

Միջոցառումների անցկացման վայրերն են.

1. միջոցառումների անցկացման հիմնական վայր՝ «The Dvin» համալիր և «Seven Visions» հյուրանոց, ինչպես նաև դրանց հարակից տարածքներ,

2. ֆինթեք և թվային ուղղվածության գործարար երկու միջոցառումների և մրցանակաբաշխության անցկացման վայր՝ «Թումո» սպորտարար տեխնոլոգիաների կենտրոն,

3. Կառավարիչների խորհրդի նիստի բացման արարողության վայր՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի «Արամ Խաչատրյան» համերգասրահ,

4. տարեկան հանդիպման բոլոր մասնակիցների ընդունելության վայր՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի ճեմասրահ՝ հարակից Ազատության հրապարակի հետ միասին,

5. գալա ընթրիքի կազմակերպման վայր՝ ենթակա է հստակեցման (գտնվելու է Երևան քաղաքում):

Առանձին միջոցառումների անցկացման վայրերի բաշխվածքը և տեղակայման պլանը ներկայացված են Հավելված 1.1.1-ում և Հավելված 1.1.2-ում:

Միջոցառումների անցկացման վայրերի ամրագրումն ու վարձակալությունն իրականացվելու է ՀՀ կառավարության կողմից, ի դեմս՝ ՀՀ ֆինանսների նախարարության: Միջոցառումների մասնագիտացված կազմակերպիչը (այսուհետ՝ «Կազմակերպիչ») պատասխանատու է միջոցառումների անցկացման վայրերի՝ նախատեսվող միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ գույքային ու տեխնիկական հագեցվածության և այլ պայմանների ապահովման ու առկա գույքի, տեխնիկայի հետ դրանց արդյունավետ ինտեգրման համար<sup>1</sup>: Բանկի կողմից սահմանված չափանիշներին բավարարելու պարագայում միջոցառումների անցկացման վայրերում առկա՝ ՀՀ կառավարության կողմից վարձակալված գույքը և տեխնիկան («The Dvin» համալիրի/«Seven Visions» հյուրանոցի կողմից տրամադրված ցանկը ներկայացված է Հավելված 1.1.3-ում) պետք է օգտագործվեն առաջնահերթ կերպով: Միջոցառումների անցկացման վայրերում առկա գույքի և տեխնիկայի՝ Տարեկան հանդիպման կազմակերպման նախապատրաստման, անցկացման և ապամոնտաժման փուլերում ի հայտ եկած վնասվածքների ու խափանումների վերացումն իրականացվելու է Կազմակերպչի կողմից:

Տարեկան հանդիպման շրջանակներում ակնկալվում է հյուրընկալել մինչև 2,000 մասնակցի, այդ թվում՝ 74 երկրի (Բանկի անդամ երկրների ցանկը ներկայացված է Հավելված 1.1.4-ում) բարձրաստիճան պաշտոնական պատվիրակությունների, ներկայացուցիչների միջազգային կազմակերպություններից և մասնավոր հատվածի ընկերություններից: Մասնակիցների վերջնական թիվը կտրամադրվի Տարեկան հանդիպմանը մասնակցության գրանցման ժամկետի ավարտից հետո:

Աստիճանակարգության տեսանկյունից Բանկի անդամ երկրի պատվիրակության ղեկավարին են հավասարեցվում նաև Բանկի բաժնետեր հանդիսացող Եվրոպական միության

<sup>1</sup> Կազմակերպիչը պատասխանատու է սույն տեխնիկական բնութագրի ամբողջ տեքստի բոլոր բաղադրիչների ապահովման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի կամ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացման/տրամադրման մասին առկա է համապատասխան նշում:

(այսուհետ՝ «ԵՄ») և Եվրոպական ներդրումային բանկի (այսուհետ՝ «ԵՆԲ») պատվիրակությունների ղեկավարները:

*Միջոցառումները կազմակերպվում և անց են կացվում Բանկի կողմից սահմանված պահանջներին համապատասխան՝ Բանկի հետ առանձին դեպքերի պատշաճ քննարկմամբ ու համաձայնեցմամբ և ՀՀ ֆինանսների նախարարության հետ սերտ համագործակցությամբ:*

Առանձին միջոցառումների և աշխատանքների կազմակերպման հիմնական նկարագիրն ու պահանջները նկարագրված են հաջորդիվ:

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ՝ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

### 2.1. Կառավարում

Տարեկան հանդիպման կազմակերպչական աշխատանքների համակարգումը պետք է իրականացվի *ծրագրի՝ անգլերեն լեզվին վարժ տիրապետող ղեկավարի (Project Manager)* կողմից, ով կհամարվի Բանկի թիմի հետ հիմնական կոնտակտային անձը: *Ծրագրի ղեկավարը պետք է ունենա հանրային, զանգվածային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման առնվազն 1 ավարտված ծրագրի ղեկավարման փորձ վերջին 5 տարիների ընթացքում:*

Կազմակերպչի կողմից պետք է նշանակվի նաև անգլերեն լեզվին վարժ տիրապետող՝ միջոցառումների *տեխնիկական թիմի ղեկավար*, որը կլինի Բանկի միջոցառումների կառավարման թիմի գործընկերը Տարեկան հանդիպման ծրագրի մեկնարկից ի վեր՝ հանդիսանալով Բանկի միջոցառումների կառավարման թիմի և տեխնիկների շփման կենտրոնը: Միջոցառումների տեխնիկական մենեջերը պատասխանատու կլինի հաղորդակցության և համակարգման համար, որն ապահովում է ծառայությունների ամբողջական և համաժամանակյա մատակարարում, սերտորեն կհամագործակցի Բանկի միջոցառումների տեխնիկական և հեռարձակման թիմերի հետ: *Տեխնիկական թիմի ղեկավարը պետք է ունենա հանրային, զանգվածային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման առնվազն 1 ավարտված ծրագրի տեխնիկական թիմի ղեկավարի (պատասխանատուի) փորձ վերջին 5 տարիների ընթացքում:*

Տարեկան հանդիպման ընթացքում նախատեսվող միջոցառումների ստեղծարար (այդ թվում՝ մշակութային) բաղադրիչի մշակման և իրականացման նպատակով Կազմակերպչի կողմից պետք է նշանակվի *կրեատիվ ղեկավար*, որը կունենա հանրային, զանգվածային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման առնվազն 1 ավարտված ծրագրի կրեատիվ ղեկավարի փորձ վերջին 5 տարիների ընթացքում:

Միջոցառման անցկացման յուրաքանչյուր սրահում պետք է նշանակվի վիդեո ռեժիսոր/շոուի հրահանգիչ միջոցառման տեխնիկական տեղակայման պահից և միջոցառման ողջ ընթացքում՝ հաշվետու լինելով Բանկի հեռուստաընկերության պրոդյուսերին:

Կազմակերպչի կողմից պետք է նշանակվի նաև լուսավորության թիմի ղեկավար միջոցառման տեխնիկական տեղակայման պահից և միջոցառման ողջ ընթացքում՝ անմիջականորեն հաշվետու լինելով Բանկի ստեղծագործական տնօրենին:

Կառավարիչների խորհրդի նիստի բացման արարողության համար Ա. Սպենդարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում համար պետք է տրամադրվի անգլերեն լեզվին վարժ տիրապետող հուշարար համակարգի (Autocue) օպերատոր:

### 2.2. Միջոցառումների սենյակի տեխնիկական անձնակազմ

Միջոցառումների յուրաքանչյուր սենյակի համար կպահանջվեն հետևյալ մասնագետները, որոնք մշտապես ներկա կգտնվեն միջոցառման սենյակում և կգործեն բացառապես Տարեկան հանդիպման միջոցառումների պահանջները բավարարելու համար.

- համաժամանակյա թարգմանության մեկ տեխնիկ այն սրահների, որտեղ նախատեսվում է համաժամանակյա թարգմանություն,
- տեսալսողական (audiovisual) համակարգի մեկ ընդհանուր տեխնիկ,
- մեկ աուդիո տեխնիկ,
- մեկ գրաֆիկայի/վիդեո տեխնիկ,
- մեկ լուսային տեխնիկ:

Տեսանկարահանող խմբի և տեսախցիկի օպերատորներ կպահանջվեն յուրաքանչյուր միջոցառման սենյակի անհատական բնութագրի համաձայն:

Լրացուցիչ անձնակազմը պետք է հասանելի լինի՝ անհրաժեշտության դեպքում ներգրավվելու համար:

Միջոցառման օրերին ողջ անձնակազմը տեղում պետք է գտնվի առնվազն 12 ժամ:

Միջոցառումների անցկացման վայրերում նշանակված անձանց ցուցակը պետք է ներկայացվի Բանկ մինչև 2024թ. մայիսի 1-ը՝ նշելով յուրաքանչյուր մասնագետի պատասխանատվության շրջանակն ու աշխատանքային գոտին:

Պաշտոնական սոցիալական գործառույթների և միջոցառումների համար տեխնիկայի տեղակայման և շահագործման համար կարող է պահանջվել լրացուցիչ տեխնիկական անձնակազմ:

### **2.3. Կամավորներ**

Տարեկան հանդիպման կազմակերպչական աշխատանքներում Կազմակերպիչն իր թիմը համալրելու նպատակով կարող է ներգրավել կամավորների: Վերջիններս պետք է վարժ տիրապետեն անգլերեն լեզվին, հնարավորության դեպքում կարող են ներգրավվել ռուսերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներին տիրապետող անձինք: Կամավորների հետ պետք է տանել հատուկ աշխատանքներ Տարեկան հանդիպման ծրագրին և կազմակերպչական աշխատանքներին ծանոթացնելու նպատակով:

### **2.3. Անձնակազմի համագետստի ներկայացվող պահանջներ**

Տարեկան հանդիպման կազմակերպչական աշխատանքներում ներգրավված կազմակերպչական թիմը, այդ թվում՝ կամավորները, պետք է ունենա Տարեկան հանդիպման պատկերանշանը պարունակող շապիկ, որը կտրամադրվի Բանկի լոգոստիկ թիմի կողմից:

### 3. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍՆԱԿԻԳՆԵՐԻ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈԳԻՍՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐԴՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

#### 3.1. Տարեկան հանդիպման մասնակիցների դիմավորումը և ճանապարհումը օդանավակայանում

Տարեկան հանդիպման բոլոր մասնակիցների համար Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում ժամանումն ու մեկնումը պարզեցված կերպով կազմակերպելու համար Կազմակերպիչը, համագործակցելով «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ ղեկավարության, ՀՀ ներքին գործերի նախարարության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի հետ, ինչպես նաև խորհրդատվության նպատակով ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության հետ, իրականացնելու է մի շարք գործողություններ: Մասնավորապես.

1. Տարեկան հանդիպման մեկնարկից առնվազն երեք օր առաջ մինչև ավարտից առնվազն երկու օր հետո օդանավակայանի ժամանման և մեկնման սրահների անձնագրերի ստուգման կետերում առանձնացվելու են առնվազն երկու գոտիներ՝ նախատեսված Տարեկան հանդիպման մասնակիցների համար: Գոտիները պետք է պատշաճ կերպով ապահովված լինեն համապատասխան պաստառներով (բաններներ), և մասնակիցների հոսքն ուղղորդելու և կանոնակարգելու նպատակով պետք է իրականացվի շուրջօրյա հերթապահություն անգլերեն լեզվին վարժ տիրապետող անձի (կամավորի) կողմից:

2. Օդանավակայանում Տարեկան հանդիպման պաշտոնական պատվիրակությունների (մինչև 300 անձ) դիմավորումն ու ճանապարհումն իրականացվելու են օդանավակայանի բարձրակարգ սպասարկման (VIP) ընթացակարգով, որի վճարի իրականացումը կատարվելու է Կազմակերպչի կողմից:

3. Բանկի նախագահին, առաջին փոխնախագահին և Կառավարիչների խորհրդի նախագահին օդանավակայանում դիմավորելու է Բանկում ՀՀ կառավարիչը՝ ՀՀ ֆինանսների նախարարը: Հիշյալ անձանց, արական սեռի ներկայացուցիչների պարագայում՝ վերջիններիս տիկնանց (եթե ներառված են պատվիրակության կազմում) դիմավորելիս անհրաժեշտ է ապահովել ծաղիկների մեկական փնջի առկայություն (Երևանում անցկացվող Տարեկան հանդիպման հերթական համարը խորհրդանշող 33-ական սպիտակ թարմ վարդից պատրաստված 3 փունջ՝ կապված Տարեկան հանդիպման տարբերանշանի ֆոնային գույնի ժապավենով՝ առանց ծաղկի սրահի անվանման և տարբերանշանի):

4. Պաշտոնական պատվիրակություններին օդանավակայանից պետք է տեղափոխել համապատասխան հյուրանոցներ ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության ներկայացուցիչների ուղեկցությամբ: Բարձրաստիճան անձանց ժամանման հերթականությունը կտրամադրվի Բանկի կողմից:

5. Օդանավակայանի ժամանման և մեկնման սրահներում պետք է տեղադրվեն երկուական տեղեկատվական կետեր՝ Տարեկան հանդիպման մասնակիցներին տեղեկատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով: Տեղեկատվական կետերը պետք է գործեն շուրջօրյա

գրաֆիկով՝ առնվազն երեք անձի (կամավորի) ներգրավմամբ՝ հերթափոխելով գիշերային ժամերին:

6. Օդանավակայանում պետք է տեղադրվեն Տարեկան հանդիպման թեմատիկ պաստառներ (բաններներ), առկա էկրաններին պետք է ցուցադրվեն թեմատիկ անիմացիաներ՝ կամ հոլովակներ:

7. Օդանավակայանի մեկնման սրահի արտաքին հատվածում՝ շենքի մուտքից առավելագույնը հինգ մետր հեռավորության վրա, պետք է ապահովվի Տարեկան հանդիպման հերթապահ ավտոբուսի կանգառի կետ՝ համապատասխան նշմամբ: Օդանավակայանի ժամանման սրահի արտաքին հատվածում՝ շենքի ելքից առավելագույնը քսան մետր հեռավորության վրա, պետք է ապահովվի Տարեկան հանդիպման հերթապահ ավտոբուսի կայանման վայր (եզրակետ)՝ համապատասխան նշմամբ:

### **3.2. Տրանսպորտ**

Տարեկան հանդիպման յուրաքանչյուր պաշտոնական պատվիրակության ղեկավարի, Բանկի նախագահի, առաջին փոխնախագահի և նախագահի ամուսնու համար պետք է հատկացվի բարձրակարգ մարդատար մեքենա (վարորդով) վերջիններիս՝ Տարեկան հանդիպման շրջանակներում Հայաստանում գտնվելու ողջ ժամանակահատվածի ընթացքում:

Տրանսպորտային միջոցները պետք է լինեն առավելագույնը ութ տարվա արտադրության, տեխնիկական անցած, անվադողերը նոր կամ շատ լավ վիճակում, ձախակողմյան ղեկով, առանց գազաբալոնային համակարգի, օդափոխության համակարգով, գործարարանային արտաքին տեսքով (առանց սև անվահեծերի և թյունինգապատման), անթերի, մաքուր վիճակում և վառելիքով լիցքավորված:

Վարորդները պետք է լինեն փորձառու (համապատասխան աշխատանքային փորձով), ներկայանալի տեսքով, սպիտակ վերնաշապիկով և մուգ գույնի պիջակով: Վարորդի կողմից հյուրի՝ տրանսպորտային միջոցում գտվելու ողջ ընթացքում հեռախոսով խոսելն ու նվազարկիչ միացնելն արգելվում է: Վարորդները պետք է բավարար չափով տիրապետեն անգլերեն լեզվին, վարժ տիրապետեն անհրաժեշտ երթուղիներին: Բոլոր վարորդները պետք է ունենան բջջային հեռախոս:

Յուրաքանչյուր մեքենայում պետք է նախատեսվի առավելագույնը երեք ուղևոր. երեք անձից ավելի կազմ ունեցող պատվիրակությունների համար պետք է ապահովվի լրացուցիչ մեքենա:

Տարեկան հանդիպման բոլոր մասնակիցների համար պետք է ապահովվի տրանսպորտային ուղևորափոխադրում հերթապահ ավտոբուսներով հետևյալ երթուղիներով.

1. «Ձվարթնոց» միջազգային օդանավակայան - Երևանի Հանրապետության հրապարակ - «Ձվարթնոց» միջազգային օդանավակայան (երթուղին պետք է մշակվի այնպես, որ ունենա մինչև 1 րոպե տևողությամբ կանգառներ Տարեկան հանդիպման համար առանձնացված հյուրանոցների մուտքի մոտ): Յուրաքանչյուր ավտոբուս պետք է սպասարկի առավելագույնը երեք հյուրանոց: Բոլոր ավտոբուսները պետք է ցուցադրեն երթուղին և սպասարկվող հյուրանոցները: Երթուղին գործելու է Տարեկան հանդիպման մեկնարկից երկու օր առաջ և երկու օր հետո ընդգրկող ժամանակահատվածում՝ շուրջօրյա, 15 րոպե ինտերվալով:



2. *Երևանի Հանրապետության հրապարակ - «The Dvin» համալիր - Երևանի Հանրապետության հրապարակ* (Երթուղին պետք է մշակվի այնպես, որ ունենա մինչև 1 րոպե տևողությամբ կանգառներ Տարեկան հանդիպման համար առանձնացված հյուրանոցների մուտքի մոտ): Երթուղին սկսելու է գործել Տարեկան հանդիպման մեկնարկից մեկ օր առաջ և ավարտվելու է Տարեկան հանդիպման վերջին օրը, երթուղու ժամերը՝ 07:00-20:00, երթուղիների միջև ինտերվալը՝ 15 րոպե:

3. *«The Dvin» համալիր - «Թումո» սրբեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - «The Dvin» համալիր*. գործելու է Տարեկան հանդիպման առաջին օրը, երթուղու ժամերը՝ 07:00-20:00, երթուղիների միջև ինտերվալը՝ 15 րոպե:

4. *«The Dvin» համալիր - Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն*. գործելու է մեկ ուղղությամբ՝ միայն Կառավարիչների խորհրդի նիստի բացման արարողության օրը՝ 2024 թվականի մայիսի 15-ին, երթուղու ժամերը՝ 13:00-20:00:

Հերթապահ ավտոբուսները պետք է լինեն առավելագույնը ութ տարվա արտադրության՝ նախատեսված 30-50 անձանց համար: Ցանկալի է, որ ավտոբուսները լինեն հիբրիդ կամ էլեկտրական: Ավտոբուսների թիվը որոշվում է Կազմակերպչի կողմից՝ հիմք ընդունելով սահմանված երթուղիներն առանց ուշացումների սպասարկելու համար անհրաժեշտ քանակը: Ավտոբուսները պետք է ունենան Տարեկան հանդիպման պատկերանշանին համահունչ արտաքին ձևավորում: Ավտոբուսների վարորդները պետք է կրեն դասական ոճի հագուստ: Յուրաքանչյուր ավտոբուսի պետք է կցվի անգլերեն լեզվին վարժ տիրապետող անձ (կամավոր)՝ Տարեկան հանդիպման մասնակիցների ուղևորափոխադրումն արդյունավետ կերպով կազմակերպելու նպատակով: Բոլոր ավտոբուսները պետք է ցուցադրեն երթուղին և սպասարկվող հյուրանոցները:

Բանկի կազմակերպչական թիմի համար Տարեկան հանդիպման մեկնարկից առնվազն տասնմեկ օր առաջ և ավարտից մինչև տասը օր հետո, ըստ անհրաժեշտության, պետք է ապահովվի երկու հերթապահ մեքենա կամ միկրոավտոբուս: Միկրոավտոբուսները կապահովեն օդանավակայանի վաղ ժամանումը լոգիստիկ անձնակազմի համար և փոխադրումը համապատասխան վայրեր: Տրանսպորտային միջոցների քանակը (ուղևորատարությունը) կարող է ավելանալ՝ ելնելով անձնակազմի թվից. անձնակազմի քանակը, ժամանման/մեկնման մանրամասները Բանկի կողմից կտրամադրվեն լրացուցիչ: Մասնավորապես, տրանսպորտային միջոցներ պետք է հատկացվեն Բանկի հետևյալ թիմերի համար Տարեկան հանդիպման ողջ ընթացքում.

- արարողակարգի թիմ (երկու մեքենա),
- առողջության և անվտանգության թիմի համար (մեկ մեքենա՝ շուրջօրյա),
- անվտանգության թիմ (մեկ մեքենա՝ շուրջօրյա),
- տրանսպորտային թիմ (երկու մեքենա),
- օդանավակայանի օժանդակ թիմ (երկու մեքենա):

Գալա ընթրիքի օրը պետք է ապահովվել ընթրիքի մասնակիցների՝ բարձրակարգ ավտոբուսներով տեղափոխումը Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնից դեպի ընթրիքի ընտրված վայր և ետ դեպի հյուրանոցներ: Երթուղու համար պետք է նախատեսվի ՀՀ ՆԳՆ ոստիկանության ուղեկցում:

Տարեկան հանդիպման մասնակիցների համար Երևան քաղաքում տեղաշարժը պարզեցնելու նպատակով անհրաժեշտ է մշակել տեղեկատվական քարտեզ-թերթիկներ (բրոշյուրներ, գունավոր, 2000 օրինակ), որոնք կպարունակեն քաղաքի տրանսպորտի և տեսարժան վայրերի, հերթապահ ավտոբուսների կանգառների և ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվություն: Տեղեկատվական թերթիկները պետք է հասանելի լինեն օդանավակայանում և հյուրանոցներում տեղեկայված տեղեկատվական կետերում, հերթապահ ավտոբուսներում և միջոցառումների անցկացման վայրերում: Հիշյալ տեղեկատվությունը պետք է մշակվի նաև էլեկտրոնային՝ MyEBRD հավելվածում ինտեգրվելու նպատակով:

Բանկի արձանագրային և լոգիստիկ թիմերը կտրամադրեն տրանսպորտային միջոցների նույնականացման հատուկ՝ Տարեկան հանդիպումը խորհրդանշող համարներ:

Տարեկան հանդիպման անցկացման վայրերի և ընտրված հյուրանոցների տարածքներում տրանսպորտային երթուղիների գործարկման օրերին պետք է առանձնացվեն կայանման վայրեր՝ Բանկի թիմի հետ համաձայնեցված հատուկ նշումներով:

Տրանսպորտային միջոցների գործարկման շրջանակներում պետք է ներդրվի կորցրած իրերի հանձնման և հայտնաբերման մեխանիզմ:

### **3.3. Կեցություն**

Կազմակերպիչը չի կրում Տարեկան հանդիպման մասնակիցների կեցության կազմակերպման (ամրագրում, վճարում և այլն) հետ կապված պատասխանատվություն: Տարեկան հանդիպման շրջանակներում Բանկն առանձնացնում է համապատասխան հյուրանոցների ցանկը և դա առաջարկում Տարեկան հանդիպման մասնակիցներին: Հյուրանոցները գտնվելու են Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում: 2023թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ ընտրված հյուրանոցները ներկայացված են ստորև<sup>2</sup>.

1. Alexander հյուրանոց
2. Holiday Inn հյուրանոց
3. IBIS Yerevan հյուրանոց
4. Armenia Marriott հյուրանոց
5. President հյուրանոց
6. Ramada հյուրանոց
7. Double Tree by Hilton հյուրանոց

Տարեկան հանդիպման ընդհանուր բրենդավորման շրջանակներում Կազմակերպիչը պետք է Տարեկան հանդիպման շրջանակներում ընտրված հյուրանոցների ընդունարաններում տեղադրի Տարեկան հանդիպման թեմատիկ պաստառներ (բաններներ):

Ընտրված հյուրանոցներում պետք է տեղադրվեն տեղեկատվական կետեր՝ Տարեկան հանդիպման մասնակիցներին տեղեկատվական աջակցություն տրամադրելու նպատակով: Տեղեկատվական կետերը պետք է գործեն շուրջօրյա գրաֆիկով՝ առնվազն երկու անձի (կամավորի) ներգրավմամբ՝ հերթափոխելով գիշերային ժամերին:

<sup>2</sup> Հյուրանոցների ցանկը կարող է ավելանալ Բանկի կողմից և կտրամադրվի լրացուցիչ:

#### 4. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Տարեկան հանդիպման անցկացման բոլոր վայրերում և դրանց հարակից տարածքում պետք է իրականացվի շուրջօրյա անվտանգության ապահովում պահնորդական ծառայության միջոցով՝ համագործակցելով Հյուրընկալող երկրի ուժային կառույցների և Բանկի անվտանգության թիմի ներկայացուցիչների հետ: Պահնորդական անձնակազմի քանակը և անհրաժեշտ որակավորումները պետք է համաձայնեցվեն անվտանգային ոլորտի համապատասխան մասնագիտական խմբի հետ, որում ներգրավված են ՀՀ ներքին գործերի նախարարության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ պետական պահպանության ծառայության ներկայացուցիչներ:

Միջոցառումների անցկացման վայրերի բոլոր մուտքերի մոտ պետք է տեղադրվեն X-ray ստուգման և մետաղական հայտնաբերման կամար-սարքավորումներ: Ըստ անհրաժեշտության՝ հանդիպման մասնակիցների պայուսակների պարունակությունը ստուգելու նպատակով անվտանգության աշխատակիցների կազմում պետք է լինեն ինչպես արական, այնպես էլ իգական սեռի ներկայացուցիչներ:

Միջոցառումների անցկացման վայրերի մուտքի մոտ իրականացվելու է Տարեկան հանդիպման մասնակիցների նույնականացում վերջիններիս QR կոդ պարունակող անվանաքարտերի (բեյջ) և QR կոդերը ընթերցող հատուկ սարքավորումների միջոցով, որոնք մատակարարվելու են Բանկի կողմից:

Տարեկան հանդիպման շրջանակներում Հյուրընկալող երկրի բարձրաստիճան պետական պաշտոնյաների մասնակցության պարագայում, որոնց անվտանգությունն իրականացվելու է ՀՀ պետական պահպանության ծառայության ներկայացուցիչների կողմից, պահնորդական ծառայությունը պետք է համագործակցի ՀՀ պետական պահպանության ծառայության ներկայացուցիչների հետ՝ վերջինիս համար ընդունելի ձևաչափով և պայմաններով:

## 5. ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համագործակցելով ՀՀ առողջապահության նախարարության հետ՝ Կազմակերպիչը պետք է ապահովի առաջին բժշկական օգնության սենյակների կահավորումը և/կամ հերթապահ շտապօգնության մեքենաների կայանման հատվածներ միջոցառումների անցկացման բոլոր վայրերում:

Բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով պետք է համագործակցություն ստեղծվի ընտրված առանձին բժշկական կենտրոնների հետ: Բուժառուի հետ բժիշկների, բուժքույրերի և այլ բուժաշխատողների հաղորդակցությունը պետք է իրականացվի անգլերեն լեզվով:

**6. ԲՐԵՆԴԱՎՈՐՈՒՄ, ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆԻՄԱՑԻԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ, ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ, ԱՌԱՋՄՂՈՒՄ ԵՎ ՆՎԵՐՆԵՐ**

Տարեկան հանդիպման տարբերանշանը մշակվել և հաստատվել է Բանկի կողմից և ներկայացված է սույն փաստաթղթի Հավելված 1.1.5-ում: Տարեկան հանդիպման բրենդավորումը պետք է իրականացվի տարբերանշանին և դրա գույներին համահունչ: Տարեկան հանդիպմանն առնչվող բրենդավորման ցանկացած նյութ պետք է համաձայնեցվի Բանկի մարքեթինգի թիմի հետ:

Տարեկան հանդիպման մեկնարկից երեք օր առաջ և մինչև ավարտին հաջորդող օրը Տարեկան հանդիպման տարբերանշանով դրոշներ պետք է տեղադրվեն Երևանի տարածքում գտնվող հետևյալ երթուղիների երկու կողմերի վրա առկա սյուներից.

1. «Չվարթնոց» միջազգային օդանավակայանից մինչև Երևանի Հանրապետության հրապարակ (Իսահակ Գասպարյանի փողոց-Երևանյան փողոց-Իսակովի պողոտա-Հաղթանակի կամուրջ-Արգիշտիի փողոց-Իտալիայի և Բեյրութի փողոցներ (ըստ երթուղու)-Վազգեն Սարգսյանի փողոց),

2. Մաշտոցի պողոտայի սկզնամասից մինչև Ֆրանսիայի հրապարակ,

3. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ և Ագաթանգեղոսի փողոցների խաչմերուկից մինչև Ֆրանսիայի հրապարակ (Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց-Պարոնյան փողոց-Պոռշյան փողոց-Բաղրամյան պողոտա-Ֆրանսիայի հրապարակ երթուղով):

«Չվարթնոց» միջազգային օդանավակայանից մինչև Հաղթանակի կամուրջ ուղղության երկու կողմերում պետք է տեղադրվեն Տարեկան հանդիպումը խթանող հնգական մեծ գովազդային պաստառներ (բիլբորդ)՝ Բանկի հետ համաձայնեցված բովանդակությամբ:

Տարեկան հանդիպման թեմատիկ անիմացիոն հոլովակներ և պաստառներ (բաններներ) պետք է տեղադրվեն «Չվարթնոց» միջազգային օդանավակայանի ժամանման և մեկնման սրահներում:

Տարեկան հանդիպման մեկնարկից առնվազն երկու ամիս առաջ Կազմակերպիչը պետք է մեկնարկի առաջնդման արշավ՝ Հյուրընկալող երկրի հետ համաձայնեցված բովանդակությամբ և ձևաչափով:

Տարեկան հանդիպման պատկերանշանով և դրա գույներին համահունչ դիզայնով և Տարեկան հանդիպման մասնակիցների թվով պետք է պատրաստվեն թղթյա էկո գրիչներ, նոթատետրեր, կրծքանշաններ, օրացույցներ: Հիշյալ պարագաներով հագեցած՝ բազմակի օգտագործման կտորե էկո պայուսակները պետք է «The Dvin» համալիրում և/կամ «Seven Visions» հյուրանոցում հատկացված հատուկ վայրում տրամադրվեն Տարեկան հանդիպման բոլոր մասնակիցներին: Նվերի փաթեթում կարող են ներառվել նաև Հայաստանը խորհրդանշող այլ պարագաներ (հուշանվերներ)՝ մինչև 10,000 ՀՀ դրամ արժողության:

Տարեկան հանդիպման մասնակից պատվիրակությունների ղեկավարների, ինչպես նաև Բանկի բարձրաստիճան ղեկավարության համար (մինչև 200 հոգի, համապատասխան անձանց ցանկը, այդ թվում՝ ըստ սեռային պատկանելության, կներկայացվի գրանցման փուլի ավարտից հետո) պետք է ապահովվեն Հայաստանը խորհրդանշող նվերներ 100,000-200,000 ՀՀ դրամ արժողության սահմաններում:

Տարեկան հանդիպման անցկացման հիմնական վայրի՝ «The Dvin» համալիր և «Seven Visions» հյուրանոցի դիմաց՝ վերջիններիս ներկայացուցիչների հետ համաձայնեցված վայրում, պայմաններով և կարգով, պետք է տեղադրվեն Տարեկան հանդիպման, Բանկի, Բանկի անդամ 74 երկրների, ԵՄ, ԵՆԲ դրոշները՝ 100x200 սմ չափով՝ կանգուն բարձր դրոշակաձողի վրա:

## 7. ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Տարեկան հանդիպման անցկացման օրերին իրականացվում է հյուրասիրություն Տարեկան հանդիպման բոլոր մասնակիցների համար: Հյուրասիրությունն իրականացվելու է ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հիմունքներով: Հյուրասիրության ընթացքում պլաստմասե սպասքի օգտագործումը բացառված է, մեկանգամյա օգտագործման սպասքը պետք է լինի բացառապես թղթյա:

Անվճար հյուրասիրությունն ըստ սրահների ընդգրկում է.

Հյուրասիրություն/վայրը	Ցանկ	Հյուրասիրության օրերը	Օրական հաճախակա-նությունը	Մասնակից-ների քանակը
Ետնախաճաշ (Networking Lunch)	Ներկայացվում է ստորև	2024թ. մայիսի 14-16	1	1250
Սրճարան	Սուրճ, թեյ և ջուր	2024թ. մայիսի 14-16	Ամբողջ օրը	500
Սուրճի կայաններ	Սուրճ, թեյ և ջուր	2024թ. մայիսի 14-16	Ամբողջ օրը	500
Տարեկան հանդիպման բոլոր մասնակիցների ընդունելություն	Կներկայացվի առանձին բաժնով	2024թ. մայիսի 15	1	2000
Բանկի նախագահի գրասենյակ	Թեյ, սուրճ, ջուր, զովացուցիչ ըմպելիքներ, խմորեղեն և թխվածքաբլիթներ	2024թ. մայիսի 13-16	Ամբողջ օրը	20
Բանկի առաջին փոխնախագահի գրասենյակ			Ամբողջ օրը	20
Կառավարիչների խորհրդի նախագահի գրասենյակ			Ամբողջ օրը	20
Բանկի նախագահի և առաջին փոխնախագահի քարտուղարություն			Ամբողջ օրը	20
34 գրասենյակներ պաշտոնական պատվիրակությունների և Բանկի քարտուղարության համար	Թեյ, սուրճ, ջուր, զովացուցիչ ըմպելիքներ, խմորեղեն և թխվածքաբլիթներ	2024թ. մայիսի 13-16	3	-
Լոգիստիկ գրասենյակ	Թեյ, սուրճ, ջուր	2024թ. մայիսի 11-16	Ամբողջ օրը	40

Հյուրասիրություն/վայրը	Ցանկ	Հյուրասիրության օրերը	Օրական հաճախակա-նությունը	Մասնակից-ների քանակը
Կառավարիչների խորհրդի քարտուղարություն	Թեյ, սուրճ, ջուր	2024թ. մայիսի 12-16	Ամբողջ օրը	10
Գրանցման սրահ	Թեյ, սուրճ, ջուր	2024թ. մայիսի 11-16	Ամբողջ օրը	30
Հասարակայնության հետ կապերի գրասենյակ	Թեյ, սուրճ, ջուր	2024թ. մայիսի 13-16	Ամբողջ օրը	20
Մեդիա կենտրոն	Ջրի սառեցնող սարք՝ երկու հատ	2024թ. մայիսի 14-16	Ամբողջ օրը	-
Բանկի լոկալ անձնակազմ	Թեյ, սուրճ, ջուր	2024թ. մայիսի 10-16	Ամբողջ օրը	60
ՔՀԿ հանդիպումների սենյակ	Ջրի սառեցնող սարք՝ երկու հատ	2024թ. մայիսի 14-16	Ամբողջ օրը	-
Բանկի տրանսպորտի և անվտանգության գրասենյակ	Թեյ, սուրճ, ջուր	2024թ. մայիսի 12-16	Ամբողջ օրը	10
Տպագրման սենյակ	Թեյ, սուրճ, ջուր	2024թ. մայիսի 12-16	Ամբողջ օրը	5
Շփումների սրահ (Networking Area)	Ջրի սառեցնող սարք՝ երկու հատ	2024թ. մայիսի 14-16	Ամբողջ օրը	-
Լոկալ անձնակազմ՝ վարձված Բանկի կողմից	Լանջ-բոքսեր	2024թ. մայիսի 12-16	1	100
Կամավորներ	Լանջ-բոքսեր	2024թ. մայիսի 12-16	1	100

Ետնախաճաշն իրականացվելու է միջոցառումների անցկացման հիմնական վայրում՝ «The Dvin» համալիրում/«Seven Visions» հյուրանոցում առանձնացված հատվածում Տարեկան հանդիպման անցկացման օրերին՝ 13:00-ից 14:00-ն ընկած ժամանակահատվածում: Ճաշացանկը պետք է ընդգրկի տարբերակված թարմ սնունդ, այդ թվում՝ հայկական խոհանոցից: Ճաշացանկում պետք է ընդգրկվի.

1. նախուտեստ՝ առնվազն տասը տեսակի (մսի և պանիրների տեսականի),
2. աղցաններ՝ առնվազն հինգ տեսակի,
3. տաք ուտեստներ՝ առնվազն տասը տեսակի,



4. խավարտներ՝ առնվազն հինգ տեսակի,
5. հաց՝ առնվազն տասը տեսակի, այդ թվում՝ հայկական լավաշ,
6. համեմունքներ և սոուսներ՝ առնվազն հնգական տեսակի,
7. գազավորված և չգազավորված ջուր,
8. զովացուցիչ ըմպելիքներ՝ առնվազն տասը տեսակի, այդ թվում՝ բնական հյութեր,
9. սուրճ՝ առնվազն հինգ տեսակի, շաքարավազ և կաթ,
10. թեյ՝ առնվազն հինգ տեսակի, շաքարավազ,
11. աղանդներ և քաղցրավենիք՝ առնվազն տասը տեսակի:

Տարեկան հանդիպման երեք օրերից մեկի ընթացքում պետք է ապահովվի բացառապես բուսական ծագման մթերքների մատուցում:

Սննդային ապրանքների 85%-ը պետք է ձեռք բերված լինի կայուն աղբյուրներից և Տարեկան հանդիպման անցկացման վայրից առավելագույնը 50 մղոն հեռավորության վրա:

Թափոնների հոսքը պետք է փաստաթղթավորվի և ներկայացվի Բանկի ներկայացուցչին՝ վերանայման և տվյալների հավաքագրման համար:

Մատուցվող յուրաքանչյուր սնունդ և ըմպելիք պետք է ունենա անվանման և հստակ բաղադրության նշում՝ անգլերեն լեզվով: Սպասքի յուրաքանչյուր տեսակ պետք է լինի միանման, նույն գույնի: Սննդային ավերգեցիկների մասին տեղեկատվությունը պետք է հասանելի լինի ճաշացանկի բոլոր տարրերի համար: Հակառակ պարագայում պետք է տեղադրվեն համապատասխան ցուցանակներ, որոնք կհուշեն, թե որտեղ կարելի է ստանալ տեղեկատվություն տրամադրել սննդային ավերգեցիկների մասին:

Ճաշացանկը պետք է կազմվի Տարեկան հանդիպման մեկնարկից առնվազն մեկ ամիս առաջ և համաձայնեցվի Հյուրընկալող երկրի և Բանկի հետ: Ճաշացանկի համտեսը պետք է կազմակերպվի Բանկի ներկայացուցիչների հետ մինչև վերջիններիս հետ համաձայնեցված օրը:

Շփումների սրահում (Networking Area) կարող է նախատեսվել սննդի, տաք և սառը ըմպելիքների վաճառք՝ ողջամիտ գներով: Վաճառքը պետք է իրականացվի ինչպես կանխիկ (<< դրամով), այնպես էլ անկանխիկ վճարման եղանակով:

Ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հիմունքներով սնունդի կազմակերպումը կարող է պատվիրակվել սննդի կազմակերպման (ռեստորանային բիզնես) ոլորտում գործող առանձին կազմակերպությունների՝ առանց վերջիններիս անվանման և տարբերանշանի օգտագործման:

## **8. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

Տարեկան հանդիպման և գործարար համաժողովի շրջանակներում կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառման համար սահմանվում են առանձին պահանջներ՝ կապված սրահի կահավորման, տեխնիկական հագեցման և մասնագիտական թիմի համալրման հետ: Սույն բաժնում նկարագրվում են ընդհանուր պահանջները, որոնք կիրառելի են յուրաքանչյուր միջոցառման նախապատրաստման և անցկացման համար:

### **8.1. Հեռավար համաժամանակյա թարգմանություն**

Ամբողջ համաժամանակյա թարգմանությունը կտրամադրվի հեռակա կարգով Interactio վեբ-հավելվածի միջոցով, որը ձեռք կբերվի Բանկի կողմից: Կազմակերպիչը պատասխանատու կլինի միջոցառումների սենյակներից յուրաքանչյուրում Interactio հարթակի լեզվական ակիբները համապատասխան ենթակարմիր և/կամ սեղանի խոսափող համակարգերին փոխանցելու համար: Լեզուները կինտեգրվեն նոթբուքի միջոցով «Interactio AV Console», «Dante Virtual Soundcard» և/կամ «VB-Audio Cable» համակարգերով, ինչպես նաև բազմաալիք աուդիո ինտերֆեյսով, որն ապահովում է հավասարակշռված XLR ելքեր յուրաքանչյուր լեզվի համար և հավասարակշռված XLR մուտքեր բնօրինակ ձայնի (floor) համար: Հեռավար համաժամանակյա թարգմանության կարգավորումների ու սնուցումների բաշխման սխեման ներկայացած է Հավելված 1.1.7-ում:

Թարգմանությունն իրականացվելու է հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և ռուսերեն լեզուներով: Միջոցառումների գերակշիռ մասը անց կկացվի անգլերեն լեզվով, անհրաժեշտ կլինի ապահովել միայն ելույթ ունեցողի ելույթի թարգմանությունը անգլերեն և հակառակը, եթե վերջինս ելույթ է ունենում այլ լեզվով:

### **8.2. Թարգմանչական կայանքներ և խցիկներ**

Թարգմանչական կայանքների և խցիկների տեղադրումը պետք է համապատասխանի Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) ժամանակավոր և/կամ մշտական տեղակայման ստանդարտին (2603 և 4043):

### **8.3. Ականջակալերի/ընդունիչների պրամադրում**

Ենթակարմիր ընդունիչների համար նախատեսված բոլոր ականջակալները պետք է լինեն երկակի փրփուր ներդիրով և ոչ ստետոսկոպից: Ականջակալները/ընդունիչները սովորաբար բաժանվում և նստատեղերից հավաքվում են Բանկի կողմից վարձված աշխատակցի կողմից: Եթե օգտագործվում են վերալիցքավորվող ընդունիչներ, յուրաքանչյուր օրվա ավարտին Կազմակերպիչը (առկայության դեպքում՝ մատակարարը) պետք է ապահովի ընդունիչների հավաքումը, մաքրումը, գիշերային լիցքավորումը և վերաբաշխումը:

### **8.4. Հեռարձակում և տեսանկարահանում**

Հյուրընկալող երկրի հեռուստատեսային հեռարձակման թիմը (այդ թվում՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության ներկայացուցիչների) կաշխատի Բանկի հեռարձակման

պրոդյուսերի հսկողության և կառավարման ներքո, և կպահանջվի մատակարարել բոլոր սարքավորումներն ու ծառայությունները: Հեռարձակման թիմը և Կազմակերպիչը սերտորեն կհամագործակցեն միջոցառումների սենյակի ձևավորման, բեմի հավաքածուների, տեսալսողական (աուդիո-վիզուալ), համաժամանակյա թարգմանության և ձայնային սարքավորումների ապահովման ուղղությամբ:

Տարեկան հանդիպումից առաջ և դրա ընթացքում մասնակից լրատվամիջոցները մուտք կունենան Տարեկան հանդիպման անցկացման վայրեր: Միջոցառումների սենյակներում նկարահանումները կվերահսկեն Բանկի հեռուստատեսության թիմը և հաղորդակցության բաժինը:

Կազմակերպիչը պետք է ապահովի Տարեկան հանդիպման տեսանկարահանման և հեռարձակման համար անհրաժեշտ գույքի և տեխնիկայի ձեռքբերումը/վարձակալությունը, որին Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը չի տիրապետում:

Հեռարձակման, տարածման, ձայնագրման և բաշխման բոլոր տեսաազդանշանները պետք է լինեն ի սկզբանե նվազագույնը Full HD (1080P) կետայնության (resolution):

### **8.5. Հեռարձակման պատկերի և ձայնի բաշխում**

Ցանցի թողունակության ապահովումը պետք է իրականացվի Բանկի SS թիմի կողմից՝ երաշխավորելու միջոցառման սենյակի պատկերի և ձայնի HDSDI, NDI կամ IPTV փոխադրումը Տարեկան հանդիպման անցկացման վայրում:

«The Dvin» համալիրի և «Seven Visions» հյուրանոցի միջոցառման յուրաքանչյուր սենյակից HD հոսքերը պետք է հասանելի լինեն յուրաքանչյուր էկրանի գտնվելու վայրի շրջակայքում, որպեսզի միացվի դինամիկ հոսող ռելե: HD հոսքը պետք է ներառի հոսքային ծրագրի վիդեո և բնօրինակ (floor) աուդիո:

### **8.6. Էլեկտրականություն և ձայն**

Էլեկտրականության և ձայնի բոլոր տեղակայումները պետք է համապատասխանեն Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի (IEC) ստանդարտներին, ինչպես նշված է CEI/IEC 914 փաստաթղթում:

### **8.7. Դյուրակիր համակարգիչներ (նոթբուքներ)**

Միջոցառումների սենյակի տեսաշնորհանդեսի (presentation) դյուրակիր համակարգիչները (նոթբուքները), MacBook և հեռարձակման այլ դյուրակիր համակարգիչները պետք է ունենան 1 Գբիտ/վրկ-ից ոչ պակաս RJ45 LAN ցանցային միացում:

Հեռավար համաժամանակյա թարգմանության դյուրակիր համակարգիչները պետք է տրամադրվեն համաժամանակյա թարգմանության մատակարարի կողմից:

Դյուրակիր համակարգիչները պետք է ունենան նույնանման բնութագրիչ և կարողանան կատարել հետևյալ գործառույթները.

1. PowerPoint տեսաշնորհանդեսներ, տարբեր ֆորմատներով վիդեո նվագարկում և ընդհանուր ադմինիստրատորի օգտագործում,
2. ուղիղ հեռարձակում, վիդեո կոնֆերանս, վիդեո և աուդիո ձայնագրում և խմբագրում:

### **8.8. Ձայնի միքսման նոտակայներ (desk)**

Ձայնի միքսման նոտակայները պետք է լինեն թվային և կարողանան ուղարկել/ստանալ Dante ձայն: Դրանք պետք է ունենան նաև ալիքի բավարար թողունակություն մեկ միջոցառման սենյակի համար, ինչպես նաև պահեստային մուտքային/ելքային ալիքներ:

### **8.9. Թվային աուդիո ձայնագրություններ**

WMA կամ MP3 ձևաչափի ձայնագրություններ են պահանջվում բնօրինակ լեզվի (floor) և անգլերեն ձայների համար:

### **8.10. Պարկերի և ձայնի տեխնիկական մոնիտորներ**

Բոլոր մշտական և ժամանակավոր տեխնիկական շահագործման տարածքները պետք է ունենան աուդիո և վիդեո մոնիտորինգի բավարար սարքավորումներ:

### **8.11. Ներկայացման փոխարկիչներ (Presentation Switchers)**

Ներկայացման բոլոր փոխարկիչները պետք է լինեն անխափան և ունենան անհատական մուտքերի մասշտաբավորման հնարավորություն: Յուրաքանչյուր փոխարկիչ պետք է կարողանա թողարկել առնվազն 1080P60 որակի պատկեր:

### **8.12. Ռադիոխոսափողներ**

Գործարար համաժողովի միջոցառումների սենյակներում ակնկալվում է ռադիոխոսափողերի լայն կիրառում, և անհրաժեշտ է ապահովել միջոցառումների անցկացման բոլոր վայրերում բավականաչափ հաճախականություններ համաժամանակյա օգտագործման համար:

### **8.13. Շնորհանդեսի ցուցիչ լույսեր**

Անհրաժեշտ է ռադիոհաճախականության ազդանշանային համակարգ բեմի և տեխնիկների աշխատանքային տարածքների միջև հաղորդակցության կազմակերպման համար: Լազերային ցուցիչներով սեղմիչներ (clicker) պետք է տրամադրվեն, որպեսզի շնորհանդես ներկայացնողները կարողանան կառավարել իրենց սլայդները՝ տեխնիկի վերահսկողության ներքո:

### **8.14. Բեմահարթակներ**

Ցանկացած բեմահարթակ պետք է լինի առնվազն 30 սմ բարձրության, գորգապատ, աստիճաններով, առաջնամասի ծածկույթով (facia), կառուցված լինի միատեսակ ստանդարտով:

### **8.15. Տեսապարտերի թվային բրենդինգ**

Թվային բրենդինգը պահանջվում է բոլոր վիդեո պատերի համար՝ Բանկի և Տարեկան հանդիպման կորպորատիվ իմիջը պահպանելու համար: Վերջինս կմշակվի և կտրամադրվի Բանկի կողմից:

**8.16. Սեղանի առջևի վահանակներ, վստահության մոնիտորների պատյաններ, հսկողական տարածքների տեխնիկական հարմարեցումներ**

**8.17.**

Միջոցառումների սենյակների համար պահանջվում են բավարար բրենդավորված սեղանի առջևի վահանակներ Top սեղանների և նիստերի դահլիճների դասավորության համար: Վստահության մոնիտորների համար անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրվեն պաշտպանական պատյաններ: Տեխնիկական հարմարեցումներ (սև վահանակներ) պետք է տրամադրվեն միջոցառումների սենյակների տեխնիկական հսկողության բոլոր տարածքների համար:

**8.18. Ամբիոններ**

Բոլոր ամբիոնները պետք է ստանդարտացված լինեն՝ ներառելով մալուխի անցքեր, խոսափողի ճկվող հենարաններ (brackets), դարակներ և ընթերցման լույս: Կառավարիչների խորհրդի բացման նիստի համար պետք է ապահովվի հատուկ պատրաստված և բարձրությունը հեռակարգավորվող ամբիոն:

**8.19. Դյուրակիր արտադրական միավորներ (PPU)/արտաքին հեռարձակման (OB) մեքենաներ**

Ձայնի և պատկերի համադրման և պատրաստման, ինչպես նաև մաքուր ու պղտոր արդյունքները և ներկառուցված ձայնային հոսքերը դեպի Արտադրական հավաքակազմ (Production Suite) տեղափոխելու նպատակով կպահանջվի PPU կամ OB մեքենա: Բազմաքանակ տեսախցիկների տեղակայում կպահանջվի միջոցառումների բոլոր սենյակներում: Կպահանջվի նաև համապատասխան տեղակայում PPU-ի և Արտադրական հավաքակազմի միջև հաղորդակցության համար, ինչպես նաև ականջի մոնիտորներ (in ear monitor) կրողների միջև միջոցառման ղեկավարի և մոդերատորների հետ հաղորդակցվելու համար: Արտադրական թիմի համար անհրաժեշտ կահույքի ապահովումը պետք է ներառվի յուրաքանչյուր PPU-ում:

**8.20. Տեսանյութի փոխանցման սահմանումներ**

TX Clean – տեսանյութ առանց ենթագրերի, TX Dirty – տեսանյութ ենթագրերով:

**8.21. Վիդեոգրաֆիկա**

Յուրաքանչյուր PPU-ի, Խմբագրման և արտադրական հավաքակազմի (Edit and Production Suite) հետ կպահանջվի գրաֆիկական գեներատոր և օպերատոր: Անհրաժեշտ է ներդնել անվանման ժապավեններ և այլ գրաֆիկական տարրեր Բանկի արտադրական բնութագրերին, և գրաֆիկական օպերատորը պետք է կարողանա օգտագործել այդ գրաֆիկները:

**8.22. Տեսաձայնագրություն**

Հեռուստատեսության թիմը պետք է տրամադրի HDSDI վիդեո ազդանշաններ՝ ներկառուցված աուդիոյով, միջոցառումների բոլոր այն սենյակներում, որտեղ առկա են մեկից

ավելի տեսախցիկներ: Ձայնագրման նպատակով TX մաքուր և կեղտոտ HDSDI ազդանշանները տեղում ձայնագրվելու են Կազմակերպչի կողմից տրամադրված HDD ձայնագրիչների վրա: Կպահանջվեն բոլոր նիստերի մաքուր և կեղտոտ տեսագրություններ բոլոր սենյակներից՝ օգտագործելով «Blackmagic Design Hyperdecks» (կամ համարժեք) համակարգեր, որոնք այնուհետև կտեղափոխվեն տեղում ցանցին կցված պահեստավորման սարքին (NAS):

1920x1080P HDSDI հոսքերը կպահանջեն, որ բոլոր ձայները ներկառուցվեն մինչև 8 ալիք բոլոր միջոցառումների սենյակներից PPU-ներով:

Հարցազրույցներն ու միջոցառումները Տարեկան հանդիպման անցկացման վայրի այլ հատվածներում կլուսաբանվեն Բանկի կողմից մատակարարվող ENG տեսախցիկների համակարգերից և դրանց անձնակազմի կողմից: ENG ձայնագրությունները պետք է տրամադրվեն SxS քարտերի վրա՝ XDCAM HD, XQD քարտերի վրա՝ XAVC կամ ավելի լավ որակով, և տեսախցիկի սարքավորումները պետք է համաձայնեցվեն Բանկի հեռուստատեսության պրոդյուսերի հետ: Էլեկտրոնային տեղեկատվության հավաքագրման (ENG) տեսախցիկների բոլոր ձայնագրող մեդիաքարտերը կտրամադրվեն հեռուստատեսության թիմի կողմից: Այս քարտերը կարող են կրկին օգտագործվել, երբ բովանդակությունը ներբեռնվի Բանկի արտադրական թիմի կողմից:

### **8.23. Լրարվական (News Pool) ծառայություններ և արբանյակային հեռահարներ հեռարձակողների համար**

Հեռուստատեսության թիմը տեղական և միջազգային հեռարձակողներին կտրամադրի Pool նյութեր՝ պահանջելով ուղիղ հեռարձակումներ բազմաքանակ տեսախցիկներով լուսաբանվող ցանկացած միջոցառման համար:

### **8.24. Ուղիղ վեբ հեռարձակում**

PPU-ի ուղիղ խառը հոսքերը կհեռարձակվեն իրական ժամանակում կամ տեղեկան մակարդակում: Յուրաքանչյուր միջոցառման սենյակի համար կպահանջվեն համապատասխան կողավորիչներ (encoder): Կողավորիչներից յուրաքանչյուրը կպահանջի երկկողմանի արտաքին չվիճարկվող երկկողմանի խողովակաշար (external uncontended bi-directional pipeline), որը բավարար է Full HD (1080P) հոսքի համար:

### **8.25. Ներքին հեռուստաբաշխման ցանց**

Անհրաժեշտ է HD վիդեո և աուդիո բաշխման ենթակառուցվածք, որը կհեշտացնի հետևյալ Արտադրական հավաքակազմից (Production Suite) ազդանշանների բաշխումը IPTV-ի միջոցով առանձին ընտրովի էկրաններ՝ տեղակայված Մամուլի կենտրոնում, Հաղորդակցության գրասենյակում և Կապերի սրահում.

1. Տարածաշրջանային նորություններ՝ եթերից դուրս,
2. BBC World News՝ եթերից դուրս,
3. Տեսանյութի նվազարկում Արտադրական հավաքակազմից (Production Suite):
4. Ուղիղ խառը տեսանյութ տեղում բոլոր միջոցառումների վայրերից՝ PPU-ներով և ուղիղ հեռարձակման հարթակով,
5. Միջոցառումների ժամանակացույցի նվազարկում համակարգչից կամ USB կրիչից:

### **8.26. Բեմի և շրջակա միջավայրի, միջոցառումների սենյակների լուսավորում**

Միջոցառումների սենյակների համար պետք է տրամադրվի անկախ լիովին կառավարելի, մթնեցնող, հեռարձակման որակի լուսավորության համակարգ:

### **8.27. Տեխնիկական սարքավորումների տեղադրում, փորձարկում և ապամոնտաժում**

Յուրաքանչյուր սենյակի սարքավորումները պետք է ամբողջությամբ տեղադրվեն Բանկի համակարգի փորձարկման և Բանկի տեխնիկական թիմի կողմից ընդունվելու համար մինչև 2024թ. մայիսի 11-ը՝ ժամը 12:00-ն: Սարքավորումը փորձարկվելուց և Բանկի կողմից ընդունվելուց հետո այն պետք է մնա իր տեղում: Սարքավորումները չեն հեռացվի միջոցառումների սենյակից մինչև Տարեկան հանդիպման ծրագրի վերջին միջոցառումն ավարտվի այդ վայրում:

### **8.28. Կրկնօրինակման (Back-up) սարքավորումներ և արագ արձագանքման կանչ**

Պետք է նախատեսվի տեղում կրիտիկական կրկնօրինակման (Back-up) սարքավորումների նվազագույն տրամադրում և միջոցառման տևողության համար 24-ժամյա արագ արձագանքման հասանելիություն: Սարքավորումների տեխնիկական բնութագրերի ցանկացած փոփոխություն, որը կատարվում է խափանման պատճառով, պետք է անհապաղ տեղեկացվի Բանկի տեխնիկական թիմին:

### **8.29. Սարքավորումների սնուցում**

Բոլոր սարքավորումները պետք է ունենան համապատասխան հոսանք, որը տրամադրվում է պահանջվող վայրերում, ինչպես նաև հավելյալ հոսանքի հնարավորություն ըստ անհրաժեշտության պահանջվող սարքավորումների համար:

### **8.30. Անխափան սնուցման սարքեր (UPS) և պահուստային գեներատոր**

Միջոցառումների սենյակների և PPU-ների բոլոր հիմնական սարքավորումները պետք է ունենան անխափան սնուցման սարքեր (UPS): Միջոցառման անխափան անցկացման համար անհրաժեշտ է ապահովել պահուստային գեներատորի առկայություն հոսանքազրկման դեպքում: ENG տեսախցիկները պետք է ունենան փոխարինելի պահեստային մարտկոցներ:

## **9. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՅՐԵՐԻՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

### **9.1. Կառավարիչների խորհրդի լիազումար նիստ**

Կառավարիչների խորհրդի լիազումար նիստը Տարեկան հանդիպման առանցքային պաշտոնական միջոցառումն է, որի ընթացքում քննարկվելու և քվեարկվելու են Բանկի գործունեությանն առնչվող հիմնական հարցերը: Նիստին մասնակցելու են Բանկի անդամ 74

երկրների, ԵՄ, ԵՆԲ պատվիրակությունները՝ յուրաքանչյուրը երեք ներկայացուցչով, Բանկի բարձրաստիճան պաշտոնյաները:

Միջոցառումն անց է կացվելու «The Dvin» համալիրի երաժշտական սրահում, որում առկա գույքը և տեխնիկան պետք է համալրվի՝ միջոցառման անցկացման պահանջները բավարարելու նպատակով:

Միջոցառման անցկացման վայրում պետք է ապահովվի 80 անձի համար նախատեսված խորհրդակցության սեղան (միջանկյալ բացվածքով) պատվիրակությունների ղեկավարների համար: Սեղանի շուրջ յուրաքանչյուր պատվիրակության համար նախատեսված հատվածում պետք է տեղադրվեն երեքական աթոռներ՝ պատվիրակության անդամների համար: Միջոցառման սրահի կահավորման համար առաջարկվում է երկու տարբերակ՝ սեղանների շրջանաձև և ուղղանկյունաձև դասավորությամբ, ինչպես ներկայացված է Հավելված 1.1.4-ում:

Սեղանները պետք է ապահովված լինեն յուրաքանչյուր պատվիրակության ղեկավարի համար նախատեսված «push-to-talk» խոսափողով (կմատակարարվի Բանկի կողմից) և թարգմանության համար նախատեսված ականջակալով՝ միացված ընդհանուր ձայնային համակարգին, պատվիրակության (երկրի կամ կազմակերպության) անունն ու դրոշմ/տարբերանշանը պարունակող անվանատախտակով (Տարեկան հանդիպման ընթացքում կիրառվող բոլոր անվանատախտակների ընդհանուր չափանիշները պետք է համաձայնեցվեն Բանկի հետ) սեղանին պատվանդան-ձողով դրվող դրոշով (10x20 սմ չափերով), ապակյա տարայով ջրով և բաժակներով՝ երեք անձի համար, Տարեկան հանդիպման տարբերանշանով ձևավորված նոթատետրերով և վերամշակված թղթից պատրաստված գրիչներով:

Միջոցառման անցկացման սրահի ներսում՝ պատի երկայնքով պետք է տեղադրվեն Տարեկան հանդիպման, Բանկի, Բանկի անդամ 74 երկրների, ԵՄ, ԵՆԲ դրոշները՝ 100x200 սմ չափով՝ կանգուն 2մ բարձրության դրոշակաձողի վրա: Դրոշները դասավորվում են հետևյալ հերթականությամբ՝ Տարեկան հանդիպման դրոշ, Բանկի դրոշ, Բանկի անդամների (երկրներ, ԵՄ, ԵՆԲ) դրոշներ՝ անգլերեն լեզվի այբբենական դասավորվածությամբ: Դրոշները տրամադրվելու են Բանկի կողմից:

Միջոցառման անցկացման սրահում պետք է ապահովվի բավարար լուսավորություն՝ երաժշտական սրահը գրասենյակային միջավայրի փոխակերպելու նպատակով: Ներքին լուսավորությունը հնարավորինս կօգտագործվի, սակայն կարող է պահանջվել լրացուցիչ լուսավորություն: Լուսավորությունը պետք է բավարար լինի PTZ տեսախցիկների աշխատանքի համար: Լուսավորության վերջնական պահանջները ենթակա են տեղում հստակեցման:

Միջոցառմանը հեռավար մասնակցություն ապահովելու նպատակով պետք է ստեղծվի հեռավար կապի հնարավորություն՝ համագործակցելով Բանկի համապատասխան թիմի հետ: Միջոցառմանը հեռավար ձևաչափով մասնակցող անձանց ելույթի ժամանակ պետք է իրականացվի պատկերի և ձայնի անխափան ինտեգրում սրահում գործող տեսաձայնային համակարգերին:

Սրահի բեմին պետք է տեղադրվի ընդարձակ LED էկրան (առկա էկրանը Բանկի պահանջներին չի բավարարում): Առկա պրոյեկտորները կարող են օգտագործվել որպես կրկնող էկրաններ՝ պատշգամբներից կախված լրացուցիչ համապատասխան պրոյեկցիոն էկրաններով: Կպահանջվի ձայնային համակարգ, որը ծածկում է սենյակը դիտորդների համար,



ինչպես նաև կրկնող էկրաններ: Սենյակի էկրաններին և հեռակառավարվող միացումներին ազդանշանների սնուցումը պետք է լինի ինքնուրույն, ըստ անհրաժեշտության:

Միջոցառման ողջ ընթացքում պետք է գործի համաժամանակյա թարգմանություն հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով՝ միջոցառման անցկացման սրահում տեղադրված թարգմանչական սարքավորումների միջոցով: Բանկի թարգմանչական թիմը համալրելու նպատակով պետք է ներգրավվեն նաև հավելյալ թարգմանիչներ Հյուրընկալող երկրից: Թարգմանությունը հասանելի կլինի ականջակալների միջոցով, իսկ թարգմանիչները կաշխատեն հեռավար կարգով՝ Interactio հարթակի միջոցով:

Խորհրդակցությունների սեղանի կենտրոնական հատվածում գտնվող բարձր սյան վրա պետք է տեղադրվեն PTZ տեսախցիկներ, որոնք ավտոմատ կերպով կկենտրոնանան ելույթ ունեցողի վրա (PTZ տեսախցիկները մատակարարվելու և շահագործվելու են Բանկի կողմից): Սեղանի կենտրոնում կտեղադրվի նաև ձայնային ամրապնդման համակարգ: Սեղանի մոտ չնստած դիտորդների համար կօգտագործվի լրացուցիչ ձայնային ուժեղացում:

Տեխնիկական օպերատորները տեղակայվելու են առկա պատշգամբի տեխնիկական դիրքում, սենյակի հետևի մասում և պատշգամբում գտնվող մեկ ձայնամեկուսիչ տաղավարում՝ հեռահար միացումների համար:

Արտաքին հեռարձակում չի իրականացվի, սակայն կարող են լինել որոշ մասնակիցներ, որոնք կմիանան հեռավար ձևաչափով՝ Webex համակարգի միջոցով: Հանդիպումը ձայնագրվելու է:

Միջոցառման սրահում պետք է տեղակայվի հատուկ խցիկ Բանկի քարտուղարության ներկայացուցիչների համար՝ փաստաթղթերի պատրաստման համար անհրաժեշտ համակարգչային տեխնիկայով և գունավոր տպիչներով:

Նիստը նախագահողի համար պետք է ապահովվի փայտյա մուրճ՝ տակդիրով, իսկ նիստի ընթացքում հատուկ ելույթների համար՝ ամբիոն՝ Տարեկան հանդիպման պատկերանշանով:

Նույն սրահում անցկացվելու է նաև Դոնորների հանդիպման համար՝ նույն ձևաչափով:

Սրահի կահավորման և օգտագործման համար անհրաժեշտ գույքին և տեխնիկային, ինչպես նաև անձնակազմին ներկայացվող պահանջները շարադրված են ստորև:

Գույքի/տեխնիկայի տեսակը, անձնակազմը	Քանակը
<b>Միջոցառման անցկացման սրահի կահավորում</b>	
80 անձի համար նախատեսված խորհրդակցության շրջանաձև/ուղղանկյունաձև սեղան և նստատեղեր՝ ետևում նստատեղերի հավելյալ շարքեր նախատեսելու համար	1
Հավելյալ նստատեղեր (քանակը կարող է վերանայվել)	160
Քարտուղարության մինչև չորս անձի համար նախատեսված առանձին սեղան	1
Տեխնիկական անձնակազմի առանձին սեղան՝ նախատեսված մինչև երկու անձի համար	1
Առկա պարահրապարակի գորգապատում	-
Բարձրացված հարթակ արտադրական և տեխնիկական շահագործման տարածքի համար (առնվազն 30 սմ բարձրության)	1
Հիմք՝ նախատեսված 6 PTZ տեսախցիկի համար	1

Գույքի/տեխնիկայի տեսակը, անձնակազմը	Քանակը
<b>Ձայնային համակարգ</b>	
Սեղանի լարային պատվիրակվող և տեխնիկապես (միմիկայով) կառավարվող խոսափողներ՝ ներկառուցված թարգմանչական հարմարություններով (կմարակարարովի Բանկի կողմից)	80
Ձեռքի տարբերակված (diversity) ռադիոխոսափող՝ ստենդով	2
Խոսքի ամրապնդման համակարգ՝ հարմարավետորեն ծածկելու ամբողջ սենյակը	1
Սեղանի անկախ բարձրախոսի ծածկույթ՝ տեղակայված սեղանի ներսում՝ հատակին, առանձին խառնուրդ բասի (bus) վրա	1
Ձայնի բաշխման ուժեղացուցիչներ (10 տրանսֆորմատորով մեկուսացված առանձին բուֆերացված գծի մակարդակի XLR ձայնային ելքերով (հստակ պիտակավորված յուրաքանչյուր լեզվի համար)՝ տեղակայված տեխնիկական FOH տարածքում)	5
Թվային աուդիո MP3 ձայնագրիչներ (Flr/E)	4
<b>Համաժամանակյա թարգմանություն</b>	
Ենթակարմիր հաղորդիչ՝ նվազագույնը 8 ալիքով սենյակն ու սեղանի տարածքը ծածկելու համար	1
Interactio AV Console-ից լեզվի հոսքեր դեպի XLR մալուխներ՝ 8 ալիքով ձայնային ինտերֆեյսով	1
Վերալիցքավորվող ենթակարմիր ընդունիչներ/ականջակալներ (Flr/E/F/G/R/A/Այլ)	400
Լարային LAN նոթբուքեր՝ հագեցած Interactio AV Console-ով, Dante Virtual Soundcard-ով և VB-Audio Cable-ով	2
8-ալիք USB ձայնային ինտերֆեյս՝ հավասարակշռված մուտքերով և ելքերով	2
2 անձի համար ձայնամեկուսացված թարգմանչական խցիկ՝ գրասեղանի լամպերով և օդափոխիչներով (հեռավար միացումների համար)	1
<b>Ձայնային հոսքերի բաշխում</b>	
Աուդիո հոսքեր ձայնային դեսկից և համաժամանակյա թարգմանության համակարգից (Flr/E/F/G/R) դեպի՝ <ol style="list-style-type: none"> <li>1. ձայնային բաշխման ուժեղացուցիչներ (DA) հսկողության տարածքում,</li> <li>2. ենթակարմիր հաղորդիչ,</li> <li>3. հեռարձակման/ուղիղ հեռարձակման մատակարար (միայն Flr/E)</li> <li>4. թվային աուդիո ձայնագրիչներ (միայն Flr/E):</li> </ol>	5
Աուդիո հոսք շնորհանդեսի/հեռարձակման 5 նոթբուքից և 2 MacBook Pro-ից դեպի աուդիո դեսկ	7
<b>Աուդիովիզուալ համակարգեր</b>	
LED վիդեոպատ (5.4 մ x 2.7 մ չափերով)՝ տեղադրված բեմի երկու կողմերում (առկա են)	2

Գույքի/տեխնիկայի տեսակը, անձնակազմը	Քանակը
LED վիդեոպատ (12 մ x 6 մ չափերով)՝ 16:9 հարաբերակցության 2 պատկեր ցուցադրելու հնարավորությամբ	1
Բարձր հզորության 21 հազար լյումեն լազերային պրոյեկտոր (առկա են)	4
Պրոյեկտորի էկրան (16:9 հարաբերակցության, 5.3 մ x 3 մ չափերով)	4
65" հարթ էկրանով վստահության մոնիտորներ հատակի ամրացումների վրա, շրջանակներով, սեղանի կենտրոնում	8
10" LED էկրաններ՝ անհատական ազդանշային հոսքերով տեխնիկական շահագործման տարածքից	3
HDMI 1080P ելք տեխնիկական շահագործման տարածքից մինչև նիստը նախագահողի տարածք	3
HDMI 1080P մուտք տեխնիկական շահագործման տարածքից դեպի անխափան փոխարկիչ	6
HDMI 1080P մուտք խոսափողների համակարգից դեպի անխափան փոխարկիչ/սրահի մատրիցա	3
Անվանման ժապավենով HDMI 1080P մուտք (քրոմա) խոսափողների համակարգից դեպի անխափան փոխարկիչ/սրահի մատրիցա	1
HDMI 1080P մուտքեր Webex նոթբուքներից դեպի անխափան փոխարկիչ	2
Անխափան փոխարկիչ (Barco E2, WatchOut, Ascender կամ նմանատիպ արտադրության կարգավորիչ) նվազագույնը 2 խառնուրդով	1
HDMI մատրիցային փոխարկիչ 8:8 սրահում ազդանշանի բաշխման համար (տրամադրվում է Բանկի կողմից)	1
HDMI 1:4 բաշխիչ ուժեղացուցիչ (տրամադրվում է Բանկի կողմից)	6
HDMI օպտիկական մալուխներ տեխնիկական շահագործման տարածքից մինչև կլոր սեղան	8
Ռադիո ազդանշանային լույսի համակարգեր	2
Ելույթի ժամաչափ (timer) նոթբուք	1
Շնորհանդեսային նոթբուքեր՝ LAN կապով	3
Տեսանյութերի նվազարկման համար MacBook Pro նոթբուք՝ LAN կապով	2
Հեռարձակման նոթբուքեր (Webex) 2 x 2 USB XLR աուդիո ինտերֆեյսով և Magewell HDMI-USB վիդեո ինտերֆեյսով	2
<b>Տեսախցիկներ (տրամադրվելու են Բանկի կողմից)</b>	
HD PTZ տեսախցիկ HDSDI միացմամբ (1080P50)	6
PTZ տեսախցիկի կարգավորիչ	1
HD տեսախցիկ (Camcorder) HDSDI միացմամբ (լայն կադր) (1080P50)	1
Gigabit 16-port PoE+ անջատիչ	1
HDSDI Matrix switcher 16:16	1
Ավտոմատ անջատվող HDSDI տեսախցիկի հոսք անխափան փոխարկիչին/սրահի մատրիցային	1
27" HD մոնիտոր	2

Գույքի/տեխնիկայի տեսակը, անձնակազմը	Քանակը
Hyperdeck HD ծայնագրիչ	2

**9.2. Կառավարիչների խորհրդի նիստի բացման արարողություն**

Կառավարիչների խորհրդի նիստի բացման արարողությունը Կառավարիչների խորհրդի լիազումար նիստի ոչ ֆորմալ հատվածն է՝ նախատեսված մասնակիցների առավել լայն շրջանակի համար: Կառավարիչների խորհրդի նիստի բացման արարողությունը տեղի է ունենալու 2024թ. մայիսի 15-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի «Արամ Խաչատրյան» համերգասրահում, որին հրավիրվելու է Տարեկան հանդիպման շուրջ 1000 մասնակից: Միջոցառմանը, որպես կանոն, ելույթով է հանդես գալու Հյուրընկալող երկրի ղեկավարը կամ բարձր ղեկավարության այլ ներկայացուցիչ:

Կառավարիչների խորհրդի նիստի բացման արարողության ընթացքում ելույթները հնչելու են ամբիոնից, թարգմանությունը կտրամադրվի հեռավար թարգմանիչների կողմից՝ օգտագործելով Interactio հարթակը, թարգմանությունը արարողության մասնակիցներին փոխանցելու համար պետք է տրամադրվի ականջակալներով ենթակարմիր համակարգ:

Հայաստանի Հանրային հեռուստաընկերության կողմից կտրամադրեն ՕԵ մեքենա և տեսախցիկի խումբ, և տեսանյութը կմիքսվի ՕԵ մեքենայում՝ նախքան դեպի Էկրան և հեռարձակման ուղարկելը: Սրահում էկրանների և հեռարձակման համար կպահանջվեն անկախ միքսեր: Տեսախցիկի դիրքերը կհամաձայնեցվեն Բանկի հեռարձակման խորհրդատուների հետ:

Ձայնը պետք է տրամադրվի ներքին համակարգով, իսկ մամուլի աուդիո հոսքերը պետք է տեղադրվեն դեսկի կողքին գտնվող պատշգամբում: Ներքին լուսավորությունը պետք է հնարավորինս օգտագործվի, բայց կարող է պահանջվել լրացուցիչ լուսավորություն: Առկա լուսավորության խցիկները և կից տարածքները կօգտագործվեն որպես տեխնիկական շահագործման տարածքներ: Լուսավորությունը նախագծվելու և կառավարվելու է տեսահեռարձակման և աուդիովիզուալ թիմերի կողմից:

Բեմի վրա պետք է տեղադրվի մեծ լուսադիոդային (LED) վիդեո պատ՝ շարժիչով ամբարձիչի վրա, որը կարող է արարողությունից հետո էկրանը բարձրացնել բեմից՝ Հյուրընկալող երկրի մշակութային միջոցառման համար տարածք ազատելու համար: Բանկի անդամների դրոշները կտեղադրվեն բեմի երկու կողմերում:

Միջոցառման անցկացման համար անհրաժեշտ գույքին և տեխնիկային, ինչպես նաև անձնակազմին ներկայացվող պահանջները շարադրված են ստորև:

Գույքի/տեխնիկայի տեսակը	Քանակը
<b>Տարածքի կահավորում</b>	
Առկա բեմ՝ ընդլայնված/նվազախմբի բարձրացված փոսով (16 մ x 12 մ)	1
Mastermind նստատեղերի դասավորություն՝ 4 անձի համար նախատեսված բազկաթոռներ և կողային սեղաններ	1

Հեռակառավարվող, բարձրությունը կարգավորվող ամբիոն	1
Autocue համակարգ՝ երկակի ապակիով, բարձրությունը կարգավորելի	1
Կողային սեղան, 2 անձի համար նախատեսված աթոռներ	1
<b>Ձայնային համակարգ</b>	
Հավասարակշռված, ստուդիայի որակի, տեխնիկի կողմից կառավարվող՝ ամբիոնի ճկվող (gooseneck) խոսափող	2
Ձեռքի տարբերակվող (diversity) դինամիկ ռադիոխոսափող՝ ստենդով	6
Դիվերսիֆիկացված ռադիոգոտիների փաթեթ՝ գլխին ամրացվող և դարձաձայլ խոսափողների ընտրության հնարավորությամբ	4
Թվային ձայնային դեսկ՝ առնվազն 32 մուտքով և 12 ելքով (անալոգային) և Դանթե	1
Խոսքի ամրապնդման համակարգ՝ հարմարավետորեն ծածկելու ամբողջ սրահը	1
Սեղանի անկախ բարձրախոսի ծածկույթ՝ տեղակայված սեղանի ներսում, առանձին խառնուրդ բասի (bus) վրա	1
Ձայնի բաշխման ուժեղացուցիչներ՝ 10 տրանսֆորմատորով մեկուսացված առանձին բուֆերացված գծի մակարդակի XLR ձայնային ելքերով (հստակ պիտակավորված յուրաքանչյուր լեզվի համար)՝ տեղակայված տեխնիկական FOH հսկողության տարածքում (ստորին պատշգամբ)	6
Ձայնի բաշխման ուժեղացուցիչներ՝ 10 տրանսֆորմատորով մեկուսացված առանձին բուֆերացված գծի մակարդակի XLR ձայնային ելքերով (հստակ պիտակավորված յուրաքանչյուր լեզվի համար)՝ տեղակայված մամուլի տարածքում՝ առկա դեսկի կողքին գտնվող վերին պատշգամբում	6
Թվային աուդիո ձայնագրիչներ (Flr/E)	2
<b>Ձայն – ճեմասրահի հայտարարություններ</b>	
Ռադիոհաճախականության ձեռքի անլար խոսափողներ հայտարարությունների համար	2
Հանրային ազդարարման բարձրախոսների համակարգ ճեմասրահի համար	1
<b>Հեռավար համաժամանակյա թարգմանություն</b>	
Ենթակարմիր հաղորդիչ՝ նվազագույնը 8 ալիքով՝ ծածկելու սրահի և բեմի ողջ տարածքը	1
Բավականաչափ ենթակարմիր ճառագայթիչ վահանակներ՝ սրահն ու բեմը ծածկելու համար	1
Սկզբնական վիդեոյի և աուդիոյի հոսք դեպի HDMI-ում Interactio AV Console ներկառուցված աուդիոով, NDI-ում կրկնօրինակումով	1
Interactio AV Console-ից լեզվի հոսքեր XLR մալուխների վրա	1
Բնօրինակ ձայնի և խառը տեսախցիկի հոսք սնուցում RSI դյուրակիր համակարգիչներ	1
Վերալիցքավորվող ենթակարմիր ընդունիչներ/ականջակալներ (Flr/E/F/G/R/A/Այլ)	1000
Լարային LAN նոթբուքեր՝ ապահովված Interactio AV Console-ով, Dante Virtual Soundcard-ով և VB-Audio Cable-ով	2

8-ալիք USB ձայնային ինտերֆեյս՝ հավասարակշռված մուտքերով և ելքերով	2
<b>Ձայնային հոսքերի բաշխում</b>	
Աուդիո հոսքեր համաժամանակյա թարգմանության համակարգից (Flr/E/F/G/R) դեպի՝ 1. ձայնային բաշխման ուժեղացուցիչներ (DA) հսկողության տարածքում, 2. ձայնային DA-ներ մամուլի տարածքում 3. ենթակարմիր հաղորդիչ 4. հեռարձակման/հոսքային մատակարար (միայն Flr/E), 5. թվային աուդիո ձայնագրիչներ (միայն Flr/E):	6
Ստերեո աուդիո հոսք շնորհանդեսի/հեռարձակման 5 նոթբուքից և 2 MacBook Pro-ից դեպի աուդիո նոտակալ	7
<b>Աուդիովիզուալ համակարգեր</b>	
LED վիդեոկատ՝ կախված շարժիչով ամբարձչից, 16 մ x 7 մ չափերով	1
43" դյույմ հարթ էկրանով վստահության մոնիտորներ բեմի վրա ցածր պրոֆիլի հատակի ամրացումների վրա՝ շրջանակներով	3
HDMI 1080P հատուկ ելքեր տեխնիկական շահագործման տարածքից դեպի բեմ	3
HDMI 1080P մուտքեր տեխնիկական շահագործման տարածքից դեպի անխափան փոխարկիչ	5
Անխափան մատրիցային փոխարկիչ (Barco E2, WatchOut, Ascender կամ նմանատիպ արտադրության վերահսկիչ), առնվազն 2 անհատական խառը ելք	1
Ռադիո ազդանշանային լույսի համակարգեր	2
Շնորհանդեսի նոթբուքեր՝ LAN կապով	3
Տեսանյութերի նվազարկման համար MacBook Pro նոթբուք՝ LAN կապով	2
Հեռարձակման նոթբուքեր (Webex)՝ 2x2 USB XLR աուդիո ինտերֆեյսով և Magewell HDMI-USB վիդեո ինտերֆեյսով	2
<b>Հուշարար համակարգ (Autocue)</b>	
Autocue համակարգ՝ երկակի ապակիով, ապակիների բարձրացման/հջեցման հեռակառավարման վահանակ	1
Մալուխի միացում վերահսկիչից դեպի բեմ	1
Autocue օպերատոր (անգլախոս)	1
<b>Տեսահեռարձակում (Հայաստանի հանրային հեռուստարձևերության OB տեխնիկայի համակազմ)</b>	
Տեսախցիկներ	8 x SONY HDCU-2580, 1 x iMovix slow motion 2 x external any cameras
Ոսպնյակներ	Fujinon HA23x7.6 (7 pcs) Fujinon HA42x9.7 (1 pcs) Fujinon HA 14x4.5 (1 pcs)
Եռոդանի	Sachtler Video FSB 25 (1 pcs) Sachler Video FSB 18 (8 pcs)

Վիդեո mixer	SONY MVS-3000X 3G/3D/HD mixer, 2ME 1080i
Վիդեո երթուղիչ (router)	4 keyers for ME, 2 panels, 32 Inputs, 8 Outputs,
Թողարկման մոնիտորային պատ	18 x SONY 17" 2 x SONY 23"
Ինժեներական մոնիտորներ	3 x SONY 17" 1 x Tektronix WFM 7200 2 x Tektronix WFM 5200
Աուդիո մոնիտորներ	2 x SONY 17"
Վիդեո-սերվերներ	1 x EVS XT3 4 channels (2 x SSM) (all networked), IP Director, XFile
VTR համակարգ	1 x Sony XDS-PD1000 HD XDCam recorder 1 x Sony PMW 1000 4 x for record any cameras
Մանրաթելային լուծումներ	9 x Hybrid Fiber Optic Cables Canare 200M SMPTE 311 Fibre Cable with SMPTE 304 Lemo, HD/SD, audio, intercom
Mixer Audio	Soundcraft VI 3000 32 analog audio input 16 AES
Աուդիո երթուղիչ (router)	Integrated
Աուդիո մոնիտորինգ	5.1 Genelec 8040/8030+7060BP Subwoofer, 5.1 Metering RTW
Dolby Սարքավորումներ	1 x DP571 1 x DP572
Intercom համակարգ	Clearcom

<b>Տեսահեռարձակում (հավելյալ սարքավորումներ)</b>	
Soundcraft-ի համար նախատեսված աուդիո բեմական տուփ, որը բաժանվում է ներքին ձայնային դեսկից՝ անկախ TV mix ստեղծելու համար	1
4-6մ կոունկ (Jib)	1
Վերնագրերի ստեղծման մեքենա	1
RF/անլար տեսախցիկ Monocular տեսադաշտով (ձեռքի) թերևս եռոտանիով	1
4 ավիքանի External Clearcom վահանակներ (անլար գոտիների փաթեթներ) էկրանների, RF տեսախցիկների, կոունկի, ձայնի, Floor մենեջերի, շոուի հրահանգչի համար	6
Ականջի մոնիտորների (in ear monitor) համակարգեր	4
Արտաքին 24"-32" HD PGM մոնիտորներ լուսավորության, ձայնի, էկրանի կառավարման, շոուի հրահանգչի, Floor մենեջերի համար	5
Փոխարկիչ՝ միաշյուսվածից դեպի պրոգրեսիվ (Teranex կամ նմանատիպ)	1
HD ուղիղ հեռարձակման կոդավորիչ	1
Նոթբուք կամ MacBook (նվազագույնը i7 Intel կամ M2 Mac) OBS/Vmix հոսքի կրկնօրինակում (back-up)	1

<i>Անհրաժեշտ մալուխներ, միացումներ և փոխարկիչներ</i>		
<i>Էկրաններ</i>		
<i>MacBook Pro (M2-M3) և Milumin/Resolume ծրագրակազմ էկրանի կառավարման համար</i>		1
<i>Intercom հարմարեցում 2 լարից մինչև 4 լար (OB տեխնիկայից դեպի ներս)</i>		
<b>Ելքային վիդեոյի բաշխում</b>		
Creston DM-NVX-351 մոդուլներ (4 մուտքային, 2 ելքային)		6
CLEAN sub mix AV փոխարկիչ/էկրանին		1
DIRTY sub mix AV փոխարկիչ/էկրանին		1
DIRTY main mix HDSDI հոսք՝ ներկառուցված ստերեո ձայնով, որը պետք է սնվի HDD ձայնագրիչին և վերհեռարձակման կողավորիչին Բանկի խմբագրման և արտադրական համակազմում կամ MCR-ում		1
CLEAN main mix HDSDI հոսք՝ ներկառուցված ստերեո ձայնով, որը պետք է սնվի HDD ձայնագրիչին և վերհեռարձակման կողավորիչին Բանկի խմբագրման և արտադրական համակազմում կամ MCR-ում		1
<b>Վիդեոյի պատրաստման անձնակազմ</b>		
Տեսախցիկների օպերատորներ (այդ թվում՝ 1 jib տեսակցիկի)		6
Ռեժիսոր (անգլախոս)		1
Vision ինժեներ		1
VT օպերատոր		1
RF օպերատոր		1
Caption / graphics օպերատոր		1
Ձայնային ինժեներ		1
Հավելյալ անձնակազմ ըստ անհրաժեշտության		
<b>Մուտքային վիդեոյի հոսքեր</b>		
Հեռարձակման մատակարարի/արտադրական թիմի ուղիղ տեսողական հոսք		1
AV փոխարկիչ՝ սենյակում ցուցադրման խառնուրդի (in-room display mixing) համար		1
<b>VIP անցկացման սենյակ</b>		
65" LED էկրան, որը կցուցադրի թատրոնի լայն կադրը		



### 9.3. Միջոցառումների սենյակներ

Տարեկան հանդիպման շրջանակներում կազմակերպվող առանձին միջոցառումների համար հատկացվելու են սրահներ՝ համապատասխան հարմարեցումներով, գույքով և տեխնիկայով: Սենյակներն ունենալու են տարբեր թվաքանակի մասնակիցներ հյուրընկալելու ծավալ: Առանձին սրահներին ներկայացվող պահանջները նկարագրված են հաջորդիվ:

#### 9.3.1. «The Dvin» համալիր/«Seven Visions» հյուրանոցի «The Stage» սրահ

Սրահում անց են կացվելու գործարար համաժողովի միջոցառումներ, այդ թվում՝ Հյուրընկալող երկրի ներդրումային հեռանկարների նիստը: Սրահում առկա բեմի ետևում պետք է տեղադրվի կոր LED պատ, բեմի վրա՝ բազկաթոռներ և կողային սեղաններ ելույթ ունեցողների համար: Ելույթ ունեցողների համար բեմում տեղադրվելու են վստահության մոնիտորներ, audio foldback համակարգեր, տրամադրվելու են ձեռքի ռադիոխոսափողներ՝ տեղից կամ բեմում քայլելիս ելույթ ունենալու համար: Հանդիսատեսի համար պետք է ապահովվի սենյակի բարձրախոսով ծածկույթ, սենյակի երկու կողմերում գտնվող կրկնող էկրաններ և ձեռքի ռադիոխոսափողներ՝ հարցուպատասխանի համար:

Կառավարվող հեռարձակման տեսախցիկները, ներառյալ jib տեսախցիկը, կօգտագործվեն միջոցառումները ձայնագրելու և հեռարձակելու համար, ինչպես նաև հնարավորություն կտա հեռավար մասնակիցներին՝ ըստ անհրաժեշտության միանալու նիստերին: Սենյակի էկրաններին և հեռակառավարվող միացումներին ազդանշանների սնուցումը պետք է լինի ինքնուրույն, ըստ անհրաժեշտության: Թարգմանությունը կտրամադրվի ենթակարմիր ականջակալներով, իսկ լեզուների ալիքները հասանելի կլինեն Interactio հարթակի միջոցով՝ հեռավար թարգմանիչների միջոցով: Ներքին լուսավորությունը հնարավորինս կօգտագործվի, սակայն բեմի համապատասխան լուսավորության ապահովումը կարող է պահանջվել լրացուցիչ աշխատանքներ: Տեխնիկական օպերատորները տեղակայվելու են սենյակի ետևի սեղանների մոտ և ձայնամեկուսացված երկու խցիկներում:

Միջոցառման անցկացման համար անհրաժեշտ գույքին և տեխնիկային, ինչպես նաև անձնակազմին ներկայացվող պահանջները շարադրված են ստորև:

Գույքի/տեխնիկայի տեսակը	Քանակը
<b>Տարածքի և բեմի կահավորում</b>	
Բարձրացված բեմ՝ աստիճաններով (շուրջ 15 մ x 4.3 մ չափերով, առկա է)	1
Mastermind նստատեղերի համար բեմի հատվածի կահավորում (շուրջ 10 մ x 4 մ չափերով)	1
Տեխնիկական դիրքի համար բարձրացված հարթակ, տեխնիկի տարածքով (մոտ 8 մ x 4 մ)	1
Mastermind աթոռներ	8
Սուրճի փոքր սեղան	7
Ամբիոն՝ բարձրությունը կարգավորվող	1
Նստատեղեր՝ կաբարե ոճով	350

2 անձի համար ծայնամեկուսացված թարգմանչական խցիկ (տեսանյութերի պատրաստում և հեռավար միացումներ)	2
<b>Ձայնային համակարգեր</b>	
Ձեռքի տարբերակվող (diversity) ռադիոխոսափող	12
Դիվերսիֆիկացված ռադիոգոտիների փաթեթ՝ գլխին ամրացվող և դարձաձայլ խոսափողների ընտրության հնարավորությամբ	8
Խոսափողի տակդիր	2
Խոսքի ամրապնդման համակարգ՝ հարմարավետորեն ծածկելու ամբողջ սրահը	1
Բեմի անկախ բարձրախոսի ծածկույթ՝ տեղակայված առանձին խառնուրդ բասի (bus) վրա	1
Ձայնի բաշխման ուժեղացուցիչներ (10 տրանսֆորմատորով մեկուսացված առանձին բուֆերացված գծի մակարդակի XLR ձայնային ելքերով (հստակ պիտակավորված յուրաքանչյուր լեզվի համար)՝ տեղակայված տեխնիկական հսկողության տարածքում)	4
Ձայնի բաշխման ուժեղացուցիչներ (10 տրանսֆորմատորով մեկուսացված առանձին բուֆերացված գծի մակարդակի XLR ձայնային ելքերով (հստակ պիտակավորված յուրաքանչյուր լեզվի համար)՝ տեղակայված մամուլի տարածքում)	4
Թվային աուդիո ձայնագրիչներ (Flr/E)	2
<b>Համաժամանակյա թարգմանություն</b>	
Ենթակարմիր հաղորդիչ՝ նվազագույնը 8 ալիքով սենյակն ու սեղանի տարածքը ծածկելու համար	1
Interactio AV Console-ից լեզվի հոսքեր դեպի XLR մալուխներ	1
Վերալիցքավորվող ենթակարմիր ընդունիչներ/ականջակալներ (Flr/E/A/Այլ)	400
Լարային LAN նոթբուքեր՝ հագեցած Interactio AV Console-ով, Dante Virtual Soundcard-ով և VB-Audio Cable-ով	2
8-ալիք USB ձայնային ինտերֆեյս՝ հավասարակշռված մուտքերով և ելքերով	2
2 անձի համար ծայնամեկուսացված թարգմանչական խցիկ՝ գրասեղանի լամպերով և օդափոխիչներով (թողարկում և հեռարձակում)	1
<b>Ձայնային հոսքերի բաշխում</b>	
Աուդիո հոսքեր աուդիո դեսկից և համաժամանակյա թարգմանության համակարգից (Flr/E/A/այլ) դեպի՝ <ol style="list-style-type: none"> <li>1. ձայնային բաշխման ուժեղացուցիչներ (DA) հսկողության տարածքում,</li> <li>2. Interactio RSI հարթակ</li> <li>3. հեռարձակման/ուղիղ հեռարձակման մատակարար (միայն Flr/E)</li> <li>4. թվային աուդիո ձայնագրիչներ (միայն Flr/E):</li> </ol>	4
Աուդիո հոսք շնորհանդեսի/հեռարձակման 5 նոթբուքից և 2 MacBook Pro-ից դեպի աուդիո դեսկ	7
<b>Աուդիովիզուալ համակարգեր</b>	
LED կոր վիդեոպատ, մոտ 22 մ x 5 մ չափերով	1

50" հարթ էկրանով վստահության մոնիտորներ հատակի ամրացումների վրա, շրջանակներով, բեմի վրա	3
HDMI 1080P ելքեր տեխնիկական շահագործման տարածքից մինչև բեմ	3
HDMI 1080P մուտքեր տեխնիկական շահագործման տարածքից դեպի անխափան փոխարկիչ	5
Անխափան մատրիցային փոխարկիչ (Barco E2, WatchOut, Ascender կամ նմանատիպ արտադրության վերահսկիչ), անհատական խառը ելքեր	1
Ռադիոազդանշանային լույսի համակարգեր	2
Շնորհանդեսի նոթբուքեր՝ LAN կապով	3
Տեսանյութերի նվազարկման համար MacBook Pro նոթբուք՝ LAN կապով	2
Հեռարձակման նոթբուքեր՝ 2 x 2 USB XLR աուդիո ինտերֆեյսով և Magewell HDMI-USB վիդեո ինտերֆեյսով	2
<b>Տեսահեռարձակում</b>	
6 -7 տեսախցիկի համակարգ՝ UHD/4K տեսախցիկներով	1
Առնվազն HD առնվազն 40x օպտիկական խոշորացում	1
Առնվազն HD առնվազն 22-23x օպտիկական խոշորացում	3
HD լայնանկյուն ոսպնյակներ 14x	3
Հեռարձակման որակի հեռուստատեսային տեսախցիկի եռոտանիներ	4
Հեռուստատեսային տեսախցիկի թեթև եռոտանի (RF/անլար տեսախցիկի համար)	1
3 M/E (առնվազն) վիդեո խառնիչ (HD/UHD) (օրինակ՝ Blackmagic Constellation/Newtek Tricaster)	1
32"-42" QLED մոնիտոր ռեժիսորի բազմատեսակ դիտման համար	1
32"-42" QLED մոնիտոր չորս բաժանմամբ՝ PTZ օպերատորի համար	1
8 հոգանոց հաղորդակցման համակարգ (տնօրեն, jib օպերատոր, Dolly օպերատոր, անլար տեսախցիկի օպերատոր, էկրանների մասնագետ, աուդիո մասնագետ, պրոդյուսեր, floor մենեջեր)	1
Ականջի մոնիտորների (in ear monitor) համակարգ մոդերատորների համար	2
HD/UHD վիդեո նվազարկման սարք	1
